սքանչելի անձնութիւնամբ , կը մաշի  
անոնց համար , եւ երբ մեռնի զա-  
ւակ , ամիսներ , տարիներ սուգ կընէ :

14. Կնոջդ հետ պէտք չէ այնպէս  
վարուիս . խօսիս , ինչպէս ուրիշ  
մարդոց հետ : կինը այր չէ . երկաթ  
կը զիմանայ հարուածի , բայց ապա-  
կին կը փշրի : Դու չես վնասուիր  
շատ յոգնելէ , բայց կնոջ չափազանց  
յոգնութիւնն ոչ թէ իրեն . այլ եւ  
զաւակացդ ու քեզի վնաս կրլայ ,  
եւ եթէ մեռնի խորհէ ի՞նչ կըլլայ  
հետեւանք :

15. Երբ խանութէդ տուն կուղաս երեկոյին, խոժոռ զէմքով հրամաններ մի տար . խորհէ որ կինդ առաւոտէ մինչեւ երեկոյ ոտքի վրայ աշխատեր, յոգներ, նեղուեր է, օգնէ կնոջ, երբ նա սեղան կը պատրաստէ, տղայոց հոգ տանելով, կամ երբ գիշերը տղան կուլայ . միմեանց բեռ տանել քրիստոնէական պարտաւորութիւն է, ո՞րքան աւելի այր եւ կնոջ մէջ այսպէս պարտի ըլլալ . Կանացի գործեր ըրէ չենք ըսեր, այս ամօթ է այրին, միայն թէ պարտիս օգնել, երբ հարկ ըլլայ, երբ կինդ չէ կարող երկու, երեք գործ միեւ նոյն ատեն կատարել, որպէսզի զու չգոռաս եւ չյանդիմանես :

16. Երբ տուն մը պիտի վարձես կամ շինես, կնոջ հանգստութիւն նկատողութեան առ. թո՛ղ նա եւս ունենայ իր ձայն այս որոշման մէջ, Վեր, վար վաղողն կինն է, ուստի աւելի նա պէտք է որոշէ տան յարմարութիւնն քան թէ այր :

17. Կինդ աղան եւ կծծի շահամու

լութեամբ զբամին զոհ մի ըներ. Փոքրինչ զբամ յատկացուր անոր, օգնական մը գտնելու երբ հարկ է, փոխանակ զանի չափազանց աշխատանաց եւ յոգնութեան ենթարկելու, զբամ ո՞ւսկից գտնեմ մի ըսեր . անձնական հաճոյիցդ համար ծախսուած զբամէդ մէկ փոքր մասը կը բաւէ եթէ կտուելու ըլլաս : Ամօթ է, անգթութիւն եւ մեղք բոլոր գործ կնոջ կը նակ բեռցնել եւ զայն պատասխանաւու բանել :

18. Խորհէ որ օրական աշխատութիւնդ, ո՞րքան ալ ծանր ըլլայ, կաւարտի, եւ, գործիքներդ մէկ կողմնեաելով, կը հանգչիս . յաջորդ օրն նորէն սկսելու համար . բայց կինը այդպէս չէ, անօր համար հանգչելու որոշ ժամանակ չկայ . եւ երբ տան բոլոր անդամներ քնով կը կազզութիւն, նա չատ անգամ կը պարտաւորի քաղցր քնոյ մէջէն զարթնուլ եւ այս եւ այն խնամել :

19. Մի նախատէր կինդ անոր ագիտութեան համար, օգնէ որ ելլէ այդ

վիճակէն :

20. Իրաւունք չունիս արհամարհական , կծու , գառն , խօսքերով ծաղրել կինդ . նորա միխթարիչ որ ես : Խորհէ որ սիրելի ծնողք , եղբայրներ , քոյրեր , ազգականներ , թողլով բոլորովին անձանօթ անձի մը նուրիբեր է զանձն , կը յիշէ իր նախկին քաղցր վիճակ մանկական , այրն է որ իր քաղցրութեամբ մուցնել պիտի տայ դայս ամէն : Ի՞նչ կըլլայ ան կնոջ վիճակ , երբ շարունակ առանց կարեկցութեան , եւ երջանկութեան ճաշակի , կանցունէ օրերը ամուսնական յարկին տակ . յիրաւի այս վիճակի մէջ եղող կին չէ այլ ինչ քան աքսորեալ մը , տարագրեալ մը :

21. Այրը պէտք է հրաժարի կամակորութենէ . իշխել՝ տիրապետել չնշանակէր , ասոր ալ անուշ կերպը կայ . երկու կամք կայ տան մէջ , այրին եւ կնոջը , ասոնք անհնար է որ ամէն տաեն եւ ամէն բանի մէջ համաձայնին , ուստի կամ երկուքէն մէկը կիշխէ , միմեանց զիջում կընեն

եւ կամ շարունակ կոխւ կըլլայ : Զիջանելը լաւ է , բայց միշտ զիջանել ալ վնասակար : Երբորզը , կոռուիլը , կաւրէ սէր եւ խաղաղութիւն : Էն լաւն է փոխադարձ զիջում . միշտ խորհելու ևնք իէ գուցէ մեր ընկեր իրաւունք ունի . խղճի չզպչող բանի մէջ զիջանելն իմաստութիւն է . փոքր ինչ անձնուրացութիւն շատ քաղցր պառզներ կը բերէ :

22. Վիճարանութենէ զգուշանալ պէտք է : Կը լսենք այր եւ կնոջ պօռում գոչում . կարծես զիրար պիտի սպաննեն , եւ պատճառ ոչինչ բան մէ , զօր օրինակ . մին պայտի երթալ կուզէ , միւսը ոչ , մին կը պնդէ թէ կանանչ է , միւսը կապոյտ : Կնոջդէ հետ բնաւ չվիճարանիլ քեզի օրէնքը ըրէ :

23. Ի՞նչ օգուտ կայ վիճելու մէջ . հնա՞ր է այս միջոցով համոզում կամ . խօստավանութիւն յառաջ բերել : Եթէ համոզել է նպատակդ , մեղմութեամբ խօսէ : Անուշ լեզուն օձն իսկ կը հանգարտեցունէ կըսէ տուածը :

24. Նաեւ վիճաբանիլ սիսալ սկըզբունք է , քանզի անով համաձայնութիւն , ներդաշնակութիւն կաւրուի եւ դառնութիւն կը ափրէ : Մի վառերայս կրակ , մէկ կայծ բոլոր տունդ կը փառկցունէ :

25. Ներողամիա եզիր . ոչ ոք կատարեալ է . կնոջմէգ կատարելութիւն մի պահանջէր . ներողամիաներն սովորաբար քիչ հանցանք ունին , ներել չուզողն է որ էն մեծ յանցաւորն է : Այլոց ներել քրիստոնէի պարաք է . որքան աւելի անոր որ «սակարէս ոսկոր եւ մարմինէս մարմին կը սեպուի : Զենք ըսեր թէ յանցանաց աչք գոցելու է , ոչ , սա կըսենք որ կնոջդ հետիր դատաւոր վարուելու չես : — Վերի 25 հրահանգներն զործադրող այր շուտ պիտի աեսնէ որ իր կին զրեթէ կը պաշաէ իր այր , սէր պիտի ածի իտան , փոքրիկ դրախտ մը պիտի ըլլայ ձեր ամուսնական յարկ :

## ԾՆՈՂԱՑ ԲԱԺԻՆ

1. Հայր եւ մայր — երկու սրբազն անուններ , երկու վեհ կոչում , բարձր պաշտօն , գերազանց զիրք . այս լաւ ըմբռնել առաջին պարտաւորութիւն է ծնողաց :

2. Եթէ ըսուեր ծնողաց թէ իրենց զաւակներ արքայական պալատ մ'ընդունուելու համար պիտի պատրաստէին , քանի՞ փութեստ զգուշութեամբ զանոնք պիտի կրթէին . արդ իւրաքանչիւր ծնող պարտի խորհիլ թէ , իրեն ինամոց յանձնուած աղայք մը թագաւորաց թագաւորին երկնային պալատը ընդունուելու համար պարտին պատրաստել : Ռւսափի ի՞նչ պարտին ընել :

3. Առաջին եւ կարեւոր պայմանն է որ ծնողք իրենք յարմար ըլլալու են այսպիսի կրթութիւն տալ իրենց զաւակաց : Ծնողք պարտին ըլլալ

Աստուծոյ զաւակներ, ճշմարիտ քրիստոնեաներ, եւ քրիտանէական առաքինութեամբ օժանեալ, ապա թէ ոչ անյարմար են ճշմարիտ կրթութիւն տալ իրենց զաւակաց :

4. Ապա պարախն նկատել իրենց զաւակներ իրրեւ իրենց մեծագոյն դանձ : Աստուած ուրիշին հարստութիւն կուտայ, բայց ինձ զաւակներ, ըստ օր մը, բազում զաւակաց աէր չքաւոր մի հայր : Շատ չանցաւ եւ աղայք մի առ մի մեռան, մարզը միաց անզաւակ : Յայնժամ զզաց ցաւօք որ տղայք «Տէրոջ ժառանգութիւն» են եւ աւելի քան ո՛ եւ է հարստութիւն :

5. Տղայքդ բեռ մի համարիր : — Զանք մեծ կընեն ոմանք ազատիլ անոնցմէ . զանոնք դպրոց կը խրկեն, միայն անոնցմէ ազատելու համար : այո՛, պիտի ծախէին, եթէ մեծ գումար մը արուէր : Ի՞նչպէս կընան կրթել զայնո, որաց արժէք գեռ չեն հասկցած : Մրահին մէջ ննջող մանկիկը, թոթով լեզով չարախօսող եւ

աստ անդ թաւալզլոր վազվզող տղեկը, յիրաւի ոչ թէ բեռ են, այլ քուրեսդ վերցունելու համար աստուածային միջոցներ :

6. Զաւակք բեռ համարողք վասնզի մէջ են ոճիրներուն էն ահռելին գործելու : զաւակն զեռ չծնած մեռցնելով : Զենք երկարաբաներ այս կէտին վրայ, սա՛ յայտնի է սակայն որ այսպիսիք այսպիսի փորձեր ընելով անձերնին կը վնասեն եւ իրենց ահռելի մահուան պատճառ կըլլան :

7. Պէտք չէ նաեւ ծնողք իրենց զաւակաց չափազանց յարգ տալով ուրիշներուն զաւակաց ծուռ նային : այսնուաստ բան է, եւ խռովութեանց պատճառ կըլլայ : այս է պատճառ որ ոմանք կուզեն որ զպրոցին մէջ իրենց տղայք մասնաւորնկատողութեան առնուին, լիորհէ որ ուրիշին զաւակն ալ գուման մէջ իր ծնողաց եւ ոչ թէ միայն քուկինդ քեզի :

8. Մանաւանդ մեծ չարիքներ կը ծագին երբ մայր կամ հայր մեռնելով կրկնամուանութիւն կըլլայ : «խորթ»

հայր կամ մայրը «խորիթ» եղբայր կամ քոյր եթէ փորձուին աշասութիւններ ընել , մեծ չարիք կը ծագի . այսպիսիք մեծ իմաստութեան են կարօտ , որ ընտանիք երջանիկ մնայ :

9. Ծնողք պարտին իրենց զաւակներ իրենց էն մեծ խնամքին առարկայ ընել : Այս խիստ ծանրակշիռ գործ է . ի՞նչ օգուտ մեռեալ մը փառաւոր հանգերձներով հագուեցնել . անկենդան , անզգայ զիակ մէ նա եւ այնպէս կը մնայ , հանդերձ տարբերութիւն չըներ . նոյնպէս ի՞նչ շահ տղան կըրթութեամբ եւ գաստիարակութեամբ զարգարել եթէ անոր հոգին , նկարագիրը , մեռեալ , անկեալ վիճակի մէջ կը գտնուի :

10. Ուստի ծնողաց զլխաւոր պարտքըն է իրենց աղայոց բարոյական կըրթութիւն տալ . ի մանկութենէ ջանալ , առանց ջանք ու ճիգ խնայելու որ տղայք սիրեն իրենց եկեղեցին . իրենց Արարիչը մանկութեան օրերէն սկսեալ յիշեն . յիշելով որ իմաստութեան , կըթութեան , գաստիարակու-

թեան — մէկ խօսքով ճշմարիտ մարդը ըլլալու սկզբնաւորութիւնը , քերականը , «Երկիւղ Տեառն» է :

11. Ծնողք կը սխալին խորհելով թէ այս պարտաւորութիւն միանգամ ընդ միշտ կատարած կըլլան զաւակը մկրաել տալով . է՞ն . այսպէս կը խորհին անոնց մարմնոյն նկատմամբ . ոչ . մեծ հոգ պէտք է տանիլ որ մարմնոյն ո՛ եւ է վեաս չնամնի . ցուրտէ , կրակէ , ջուրէ , վասնգաւոր առարկաներէ , վեասակար կերակուրներէ զգուշացնել եւ զիշեր ու ցորեկ զրեթէ ամէն բոպէ պէտք է հսկել մարմնոյն վրայ :

12. Սակայն այս մարմնական հոգ եւ խնամ ծնողական պարտաւորութեան մի փոքր մասն է միայն . Տղան միտք ալ ունի . անոր ձեւ մը տալը ծնողաց մեծ իմաստութենէն է կախեալ , որպէս զի ծուռ , տգեղ , սխալ խորհուրդներով չեցուի միտքը . պէտք է հսկել որ ուսուցիչներ , գաստիարակներ , հաւատարիմ ու կարող անձինք ըլլան : Ասոնք բոլորը մեծ արթ-

նութիւն , փոյթ եւ հոգածութիւն կը պահանջեն :

13. Սակայն ծնողական պարտականութեանց ցանկ ասովլ ալ չգոցուիր . զաւակի հոգի մ'ալ ունի , եւ ասոր կրթութիւնը միւս երկուքէն շատ աւելի ծանր , եւ դժուարին է : Ծնողական սէրը հոս փորձի կը տըրուի . եթէ կայ այս սէր , յայնժամ ծնողք իրենց ամէն հաճոյք զոհելով՝ զաւկին քովլ կը հսկեն արթնութեամբ մինչեւ մեծնայ :

14. Ուստի ծնողաց գործ խաղալիկ չէ . խիստ ծանր է , մարմին , միտք եւ հոգի ի միասին կրթել , զասախարակել , այնպէս որ առողջ մարմնոյ մէջ բնակի մի առողջ միտք եւ մի առողջ հոգի : Համբերութեան , յարատեւութեան , եւ մանաւանդ ասուածային օգնութեան են կարօտ ծընողք այս պաշտօնի զլուխ կենալու համար :

«Մայրս , կըսէ իտու արյա , չորս որբերով այրի մնաց : Օր մը անհնազանդ գանուեցանք եղբայրներէս եր-

կուքն ու ես . մայրս գաւազան մ'առաւ եւ չողացուց ճռճեց վրանիս . կոնակնիս խոնարհեցուցինք , բայց փոթորիկը չանցաւ . տեսանք որ մայրերնիս յանկարծ մէկ կողմնեաց խարազանն ու մրմնջեց .

— Ոչ , այսօր չէ քանի որ բարկացած եմ :

Երկրորդ օրն անցաւ առանց որ եւ է արգելքի . ափերնիս կը չփէինք , կարծելով թէ ամէն բան մոռցուած է : Զարաշար կը սխալէինք : Երրորդ օրը զեռ անկողինն էինք , երբ մայրերնիս սոսկալի գաւազանն ի ձեսին՝ ննջանենեակնիս մտաւ ըսելով .

— Երէկ ալ զեռ բարկացած էի , բայց այսօր այլեւս բարկութիւն չէ մնացած վրաս , այսօր կրնամ օգտակարապէս ուղղութեան բերել . օ՞ն ուրումն , տեղերնէդ ելէք : Եւ լաւ ծնծ մը կերանք : Մայրս որդւոցը վրայ ունեցած իշխանութիւնը մարգաց վրայ ալ կը պահէր : Կիրակի իրիկուան մը զէմ անդրանիկ եղբայրս հրաման , թոյլառութիւն խնդրէր էր մայրէս քանի

մը անսպիւտ ընկերներով ժամի մը  
չափ տունէն գուրս զբօսանքի երթա-  
լու : Մայրս մերժեց . հաճութիւն  
չտուաւ :

—Հրաման տաս չտաս , այսպէս  
կամ այնպէս պիտի երթամ , լսու  
եղբայրս ցասկոտ ու տհած : Սակայն  
առանց պնդելու գնաց անկողին մտաւ,  
Երկրորդ առառուն , արթնցած առեն  
անկողնին մօտ աթոռակի մը վրայ  
գտաւ երկու շապիկ եւ իր հանդեր-  
ձանքը :

—Ինչ է այս , հարցուց :

—Ի՞նչ պիտի ըլլայ . քու ծրարդ է ,  
ուրիշ տեղ մը գնա , քանի որ այլեւս  
հանդիստ ու լաւ ես , չես ուզեր մնալ  
հոս :

—Սակայն . . . .

—Բայց , սակայն չկայ :

Վճռական եւ հատու էր մայրենի  
խօսքը . ծրարը կապեց տիրութեամբ  
եղբայրս եւ եկաւ մնաս բարեաւ ըսել  
մեզի : Ողջերթի ուզեկցութիւն ընե-  
լու ելանք :

—Տեղերնիդ նստեցէ՛ք , ըսաւ մայ-

րերնիս . մինչեւ գուռն անգամ հրա-  
ման չունիմ որ երթաք :

Ո՛չ ոք տեղէն երերաց . բայց ամէ-  
նուս ալ սիրաը ելած էր :

Իրիկուան ժամը իննին , աղօթքի  
ատեն վերագարձաւ եղբայրնիս . բայց  
եւ ոչ մէկերնիս խօսք մը չնետեցինք:  
Երկրորդ առառուն ալ նոյնպէս իր թէ  
ո՛չ ոք հոգ չտարաւ եւ ուշագրութեան  
առաւ անոր ներկայութիւնը : Ամէնքս  
ալ անտառը զացինք մէն միայնակ  
թողլով զանի կրակարանին քով .  
զլուին ափերուն մէջ :

Երկրորդ օրը՝ երբ մայրերնիս ամէն  
մէկերնուս օրուան գործ կը բաժնէր,  
կը սահմանէր , եղբայրս համարձակե-  
ցաւ փորձել ու ըստաւ . Հապա հ՞ս ,  
ինձ բան մը չե՞ս յանձնարարեր :

—Երբ որ հնազանդիս , այն ատեն,  
քեզ ալ բան մը կը յանձնարարուի :

—Մա՛յր , կ'երդնում հնազանդիլ :

—Միշտ :


—Այո՛ , միշտ :

—Առանց վիճաբանելո՞ւ :

—Այո՛ առանց խծբծելու , վիճելու :

Գնա՛ տեղդ նստիր ուրեմն :  
Եւ եղայրս 22 տարեկան էր երբ  
տեղի ունեցաւ այս դէպքը , որ մի-  
եւնոյնը պիտի ըլլար՝ եթէ 30 տարե-  
կան ալ եղած ըլլար :

Սրդի ժամանակի չափազանց զիւ-  
րազգածութիւնն անշուշտ բարձրագոչ  
աղազակ մը պիտի բառնայ հանդէպ  
մօր մը այս վարմունքին իր զաւակաց  
նկատմամբ , վարմունք մը սակայն՝  
որ իր լաւագոյն կողմերն ունի , եթէ  
դատինք այսպիսի կրթութեան մը յօ-  
րինած ու յառաջ բերած մարդիկներէ :



## ՕՐԻՈՐԴԱՅ ԲԱԺԻՆ

Հազիւ կը պատահի որ գեղեցիկ  
կին մը նաեւ արտասովոր դաստիա-  
րակութեամբ օժտեալ ըլլայ . քանզի  
անոնք ունայնամիտ ու թեթեւաբա-  
րոյ ըլլալով մտքի ու սրտի մշակու-  
թեան այնքան կարեւորութիւն չեն

տար , որքան մարմնոյ գեղեցկու-  
թեան :

Գեղեցկութիւն արհամարհել մըտ-  
քերնուս չանցնիր , սակայն սա ստոր-  
նագոյն է բազգասամամբ ուրիշ կա-  
նացի յատկութեանց : Գեղեցիկ կինը  
բնութեան ամենավսեմ արտազրու-  
թիւնն է . անէծք , չարիք մը կըլլայ  
սակայն գեղեցկութիւն , եթէ անոր  
հետ գուռզութիւն , ունայնամտու-  
թիւն , ազիտութիւն եւ հպարտու-  
թիւն կընկերանայ :

Ուսափ նա որ լոկ գեղեցկութենէ  
հրապուրուելով ամուսին կընարէ , շատ  
յիմար գործ մը կը տեսնէ , եւ ան-  
հաշուելի թշուառութեանց կենթար-  
կէ իր ընտանեկան կեսնք :

Գեղանի աղջիկը ծաղկախտէ րըս-  
նուեցաւ , սկսան ոզբալ մայր ու աղ-  
ջիկ . չէ թէ կենաց ի վտանգի ըլլա-  
լուն համար , այլ քանզի օրիորդին  
գեղեցկութիւն պիտի աւրուեր այդ

ախտով : Այս՝ հովը կը փչէ եւ ծազիկը կը թառամի , կը չորնայ , Ուստի գեղեցկութիւն երկրորդուկան տեղ պէտք է բռնէ միւս աւելի կարեւոր եւ կենսական կանացի յատկութեանց քով :

Հայր մը ունէր մանչ մը եւ աղջիկ մը . մանչը շատ գեղեցիկ , աղջիկը խիստ տգեղ . Նախանձ մատաւ աղջկան սրտին մէջ . հայրը կանչեց երկուքը ու սապէս խօսեցաւ . Ամէն օր հայելին նայեցէք . դուն , աղա՛ս , որպէսզի գեղեցիկ դէմքդ վատ զործքերով չագեղցունես եւ , դու , աղջկս , որպէսզի առաքինի , համեստ վարքովդ ծածկես դէմքիդ տգեղութիւն :

Դէմքի գեղեցկութիւն ինքնին արժէք չունի , եթէ կը պակսի սրտի ազնուութիւն եւ հոգիի գեղեցկութիւն . թող սիրտդ գեղեցիկ ըլլայ . այն է կարեւոր :

Այս՝ սրտի ազնուութիւն , հոգիի գեղեցկութիւն , թանկագին գոհարներէ եւ արդուզարդէ եւ հրապուրիչ գեղեցկութենէ աւելի թանկագին է . ամէն աղջիկ պէտք է ասով օֆտուի . գեղեցիկ հոգիին բարեգործութեան ողին է որով անձնուրացութեան եւ աշխատութեան կը մզէ զկին . գեղեցիկ հոգին կինը զթութեան հրեշտակ կընէ :

Հառւարտ մարդասէրը առաջարկեց իր կնոջ որ իր զուարճութեանց համար զումար մը գործածէ . Կինը պատասխանեց . Ա՛խ , ատով աղքատ րնատանիքի մը աղւորիկ անակ մը կրնայ շինուիլ : Այնպէս ալ ըրաւ . Ահա գեղեցիկ կին մը :

Տիտոս Հռոմայեցին կորսուած կը սեպէր ա՛յն օրը զոր առանց բարեգործելու անցուցած էր . այս պէտք է ըլլայ գեղեցիկ հոգիի տէր կնոջ մը ամենաթանկագին զարդ :

Հոգին անջնջելի , անմահ է . այս-  
պէս նաեւ ըլլալու է հոգիին զարդը .  
ոսկի , արծաթ , աղամանգ , յակինթ ,  
մարգարիտ , բենէզ եւ ծիրանի , փե-  
տուր եւ ծաղիկ — կրնա՞ն առոնք  
զարդարել հոգին . ո՞չ . հոգին ուրիշ  
զարդ ունի , եթէ ոչ մերկ եւ խայ-  
տառակ կըլլայ :

Խիստ գեղանի կինը որ սքանչաց-  
ման եւ նախանձու առարկայ է ե-  
ղած , շատ չանցնիր կը թառամի , կը  
խամրի , կը մեռնի , կը փատի ու ափ  
մը հոգի կը փոխուի . ո՞ւր է հիմա իր  
գեղեցկութիւն հրապուրիչ , պճնեալ  
մարմին — ոչնչացաւ նա . իսկ ա'յն  
կին , որ փոխան միայն իր արտաքին  
պատեան — կաւէ տուն — զարդարե-  
լու եւ գեղեցկացնելու , աւելի ուշա-  
դրութիւն ըրաւ իր ներքին անձին ,  
հոգիին , գեղեցկացման . թէեւ անոր  
ալ մարմին փոտեցաւ հոգին մէջ զըր-  
ուելով , սակայն իր գեղեցիկ հոգին  
թողուց գեղեցիկ արդիւնք անմոռա-  
նալի . անջնջելի կերպով պատմու-

թեան էջերուն իւ մարդկութեան  
սրտերուն վրայ քանդակուած : Զանք  
ըրէք գեղեցիկ հոգի ստանալ :

Օրիորդներ պարախին սակայն ան-  
ձերնուն ինամ տանիլ . առողջ միտք  
առողջ մարմնոյ մէջ . միտք ու մար-  
մին այնքան կախում ունին իրարմէ ,  
որ երբ մէկը հիւանդանոյ միւսին  
գործունէութիւն կը խանգարի . մինչ  
մէկին քաջառողջութիւն միւսին գոր-  
ծունէութեան կը նպաստէ :

Ուսեալ աղջիկներ մարմնոյ կալ-  
մութիւն լաւ զիտեն . սսկորներ ,  
սիրտ , թոք , ստամոքս , արեան շրբ-  
ջան , չնչառութիւն եւն . իրենց ծա-  
նօթ են եւ կրնան նկարագրել . սա-  
կայն չեն զիտեր , կամ լաւ եւս է  
ըսկ , հոգ չեն ատանիր թէ անոնց  
ի՞նչպէս ինամ տանելու են :

Այսպէս կը մեղանչեն իրենց առող-  
ջութեան դէմ եւ ամօթի զգացում  
չեն ունենար երբ զայն կործանելու

յանցանքի մէջ զանուին . քանզի սովորութիւն է եղած եւ ամէն օրիորդ կընէ :

Մտաւոր եւ այլ աշխատութիւն չէ որ աղջկանց վատառողջութեան պատճառ կըլլայ , այլ անոնց սնունդը . հագուստը եւ չնչած օդը . պէտք է բաւականաչափ սնունդ եւ մաքուր ոդ , առողջապահութեան հակառակ եղող ճօքան , քօրսէն , բարձր կրունկով կօշիկ . թղթախաղի սեղանին վրայ ժամերով ծովլ — ասոնք են վատառողջութեան պատճառներ եւ չէ թէ աշխատութեան :

Ծնողք կը կարծեն թէ իրենց աղջիկներ հիւանդութեանց աւելի ենթակայ պարտին ըլլալ , քան մանչերն . մեծ սիսալ մ'է այս . հարկաւեթէ աղջիկներ օրն ի բուն , չորս պատերուն մէջ բանտարկուած մնան , մաքուր օդէ , լոյսէ եւ մարզանքէ զրկուած , հիւանդ պիտի ըլլան . տուր սակայն անոնց ալ մանչերուն վայե-

լած մաքուր օդն , մաքուր ուտեստ եւ մարմնամարզ , եւ աղջիկը , նման մանչուն , կայտառ կըլլայ եւ քաջառողջ : Մանաւանդ բացօթեաներ , « օդափոխութիւն » յոյժ կը նպաստեն օրիորդաց քաջառողջութեան եւ կայտառութեան :

Արդ ուսումը չէ որ աղջկանց առողջութիւն կը խանգարէ . այլ վերոյիշեալ զեղծումներ են պատճառ անոնց տկարութեան . սակայն երբ փառամոլ ծնողք ստիպեն որ աղջիկներ 17-18 տարեկան չեղած զպոսցին ընթացք աւարտեն , շատ մը լեզուներ , զիտութիւններ եւ ձեռարուեսաններ սորվելով 3-4 տարուան միջոցին , ան ատեն զարմանալի պիտի ըլլար եթէ աղջիկներ քաջառողջ մնային . զուցէ մանչեր , այս ստիպման ենթարկուելով , աւելի տկար պիտի ըլլային :


Անզլիացիք կըսեն , լաւագոյն է ճաշէս զրկուիլ , քան առօրեայ բացօթեայ պտոյաէս . ուստի , մանուկ հա-

սակէն սկսեալ , տղայք բացօթեայ շարժումներու կը վարժեցուննն , մինչեւ որ այս կենսական պէտք մը զառնայ անոնց համար . ինչ կարեւորութիւն որ ունի , անդլիացի աղօւ եւ աղջկան մը . կերակուր , նոյն կարեւորութիւն ունի բացօթեայ առօրեայ մարզանք :

Ուրիշ յիմար գաղափար մ'ալ սա է որ ծնողք կը կարծեն թէ աղջիկներ փափուկ իսկ մանչեր կոչա մեծնալուն թէ կերակուրի , թէ հագուստի եւ թէ մարզանքի մասին . Քաջառողջ մանչը հագուեցուր , կերակրէ եւ աշխացուր աղջկան նման փափուկ կերպով եւ 6 ամիս չանցած տղան ակար , վատոյժ եւ թշուառ արարած մը կըլլայ . Ընդհակառակն մանչերուն վերապահած կոչտ կոչած հագուստ , կերակուր եւ մարզանք փորձէ աղջրկանդ վրայ , թող խաղայ , ցատկէ բացօդեայ աեղեր , ուտէ , խմէ , զօրաւոր կերակուր , առողջ ըմպելիք եւ քիչ ատենէն աղջիկդ նոր կեանք եւ

կերպարանք կը ստանայ :

Քունն ալ մարմնոյ եւ մտաց զարգացման յոյժ նպաստաւոր է . չափահասք 8 իսկ գեռահասք 9-10 ժամ քնոյ պէտք ունին . քաջառողջ ըլլալ ուզող աղջիկներ պարախն զայն նկատողութեան առնել : Գիշերուան խաղերու նույիրեալ ժամեր կեանքէն տարիներ կը պակսեցուննն . քնոյ յատկացեալ յամերէն գողնալուն տուգանքն այս է :



## ԵՐԻՐԱՍԱՐԴԱՑ ԲԱԺԻՆ

Կուզե՞ս երջանիկ կեանք վարել — . ճանչցիր Աստուծոյ պարզեւած բարիքներուն արժէքը , գործածէ զայնս պարզեւողին կամաց համեմատ եւ պէտք եղածովն գոհ եղիր :

Մէկը ըսաւ Յոյն իմաստանէրի մը .

Ի՞նչ լաւ է փափաքածն ունենալ : Լաւ ագոյն եւս է , ըստու իմաստասէր , ունեցածովն դոհ ըլլալ : Ո՞րքան բազմանան փափաք , ա'յնքան աճին կարօտութիւնք , եւ ո՞րքան աճին կարօտութիւնք , ա'յնքան աճին թշուառութիւնք . ուստի ունեցածովն դոհնանալ , բաւականանալ — այս է երջանկութիւն :

Երեք հոգի գանձ կը գտնեն . կրրուսիրագոյնը քաղաք կը խրկին որ ուտելիք զնէ , սա կը խորհի միւս երկուքին բաժնին տիրանալ , ուստի կերակուրին մէջ թոյն կը խառնէ . Նոյն ագան խորհուրդ միւս երկուքին ալ սիրտ կը զբաւէ եւ կօրոշեն ընկերնին սպաննել եւ տիրանալ անոր բաժնին : Այսպէս ալ կընեն եւ յետոյ կուտեն անոր բերած կերակուր եւ — երկուքն ալ մեռնին : Ուստի ըսենք իմաստունին հետ , զսպենք ցանկութիւն , ազան , անյագ բաղձանք եւ կրլանք երջանիկ որքան ննար է յաշխարհի Հոս կը կայանայ ճշմարիտ հարստութիւն եւ չէ թէ ստացուածի յաւելում :

Կըսեն թէ աշխարհի մէջ չկայ երջանկութիւն . պարապ խօսք . գոհունակութիւն եղած տեղ երջանկութիւն կայցելէ եւ հոն կը մնայ ցորչափ գոհունակութիւն կայ եւ մնայ : Երջանկութիւն եւ գոհունակութիւն միշտ ձեռք ձեռքի տուած կը շրջին եւ կենան : Եւ ի՞նչ են աշխարհի զանձեր , որոնց պատճառաւ ա'յնքան թշուառ կրլանք եւ զայլս մեր հետ թշուառ կընենք , կը նմանինք տղուն որ մեզուին զմայլած , հեւ ի հեւ ետեւէն կիյնայ եւ զայն բռնածին պէս կը խայթուի :

Յունաց հեթանոս փիլիսոփաներ իսկ առաջին տեղը կուտան առաքինութեան , երկորդը քաջառողջութեան , երրորդը զուարճութեան իսկ էն վերջինը հարստութեան : Այս վերջին ան ատեն նրջանիկ կընէ մնզ երբնկատենք զայն պարզեւ աստուածային եւ զմեղ անտեսներ . եւ գործածենք զայն ինչպէս կամի պարզեւողն , այսինքն բարեգործել . այս պարտականութեան կատարում կընէ մնզ եր-

ջանիկ եւ ոչ թէ ոսկիի զանգուածներ :

Փոխանակ բարեգործելու շռայլութեամբ կը վատնեն հարստութիւն , կոչունքներ , մնածածախ հարսանիք , պարանանդէս , ցայգահանդէս , բազմածախ , ասողջութիւն խանգարող արգուզարդ , եւալին . ասոնք մոլութիւններ են եւ մոլին չկրնար ըլլալ երջանիկ : Մէկ մոլութիւն երկու զաւակաց տարեկան ծախքին հաւասար կարմէ . ա'լ խօրհէ թէ ո'րքան թրշուառներ երջանիկ կրնան ըլլալ երբ վերջ գանեն այս անօգուտ շռայլութիւնք : Կը սխալիք երբ ըսէք թէ ձեր ստացուածքին տէրն ըլլալով ազատ էք զայն գործածել ինչպէս կամիք , անտես էք , ընդունիք թէ ոչ , եւ օր մը պիտի լսէք սաւ ահաւոր ձայն . ա'լ չես կրնար անտես ըլլալ , եկ , եւ անտեսութեանդ հաշիւ տուր:

Ոչ թէ շռայլութիւն այլ ծախուց մէջ խնայողութիւն իմաստութիւն է . խնայել՝ բարեգործել կարենալու համար : Միշտ աւելորդ , անհրաժեշտ

պէտք չեղած ծախսքէն զգուշանալ իմաստութիւն է : Ի՞նչպէս հարստացար , հարցուց տղան հօրը : Վառուած ճրագներուն մէկը մարելով , քանզի մէկ հատին լոյս կը բաւէր , պատասխանեց հայրը :

Հիւրեր մեծարելու համար փոքր ինչ կրնանք ծախսքերնիս աւելցունել , սակայն առանց շռայլութեան սահմանէն ներս մտնելու : Սոկրատ հիւրերուն մեծամեծ պատարաստութիւն չեր ըներ . երբ պատճառն հարցուցին ըստաւ . « Եթէ հիւրերս պարկեշտ մարդիկ են , այս կը բաւէ . իսկ եթէ չեն , այս իսկ շատ է անոնց համար :

Ժամանակը գանձերուն մեծագոյնն է . ուստի զայն եւս վատնել շռայլութիւն է , մոլութիւն , ծուլութիւն է . այս ժանգ մ'է որ կապականէ աղնիւ ձիրքեր , կը ջնջէ առաքինութեան սերմեր եւ ծնունդ կու տայշատ մ'ուրիշ մոլութեանց :

Ծուլութեան դարմանն է զբաղում . սակայն չափազանց զբաղում ալ մոլութեան կարգ կանցնի , զի հալ ու

մաշ կընէ մարմին եւ միտք ու հոգի կր հիւծի . Աղեղ միշտ յարուած եւ ձիդ պահելով կը կորսնցունէ առաջականութիւն եւ բանի մը չի զար . Ապագան միշտ աչաց առջեւ բըռնողն անկարելի է որ ծոյլ ու անգործ կենայ ,

Զբօսանք . խաղ , զուարճութիւն — այս է ծոյլին փափաք . կոսպառէ ժամանակ քնով , մինչ «հօթն ժամք ի քուն , բաւ հն ամէնուն» . ասոր համար ծոյն կրլլոյ վատառողջ ,

Բնութեան Հեղինակ քնոյ համար դիշերն է սահմանած . ի՞նչ կրլլայ անոնց վիճակ , որք քնոյ յատկացեալ ժամեր վատանելով անառակութեան վայրեր եւ կանանչ սեղանին շուրջ . արշալոյսին անկողին կը փնտռեն . կը կրկնենք , Աստուծոյ տուած ամէն բարիք եթէ գործածենք ճիշդէս նա նոպատակած է , յայնժամ կրլլանք առողջ , յաջողակ եւ երջանիկ : Սակայն ծուլութիւն եւ անզբազութիւն ի վերջոյ կառաջնորդէ հեշտութեան յորձանքը , ուր անզամ մ'իյնող հա-

զիւ կազաաի : Նա կուաէ մարմնոյ զօրութիւն . կը սպառէ կենսական հիւթ , կը խանգարէ միտք , կը թունաւորէ հոգին . աւերում ընտանեաց , փօխանցիկ , զազիր ախաեր , ոճիրներ , եղեռնագործութիւնք , դառն կեանք , կանխահաս մահ — ասոնք են նորա պտուղներ : Խրատ , յորդոր , ճիգ եւ ջանք ի զուր չուայլուեցան . ի վերջոյ հայրը առաջնորդեց իր անկետ , խոր անկեալ , որդին հիւանդանոցի մը ընդարձակ սրահ . ուր տոփանաց չասառւած ունեայն խրնկարկուք եւ երկրպագուք աննկարագրելի զաւոց ու տանջանաց մէջ կը առապէին . աչք , քիթ , ականջ , շրթունք կրծուած , չարաւալից վէրքեր , գարշահոտութիւն , զժօխային տեսարան :

Սարսուս մը , պաղ քրաինք մ'եկաւ երիտասարդին վրայ ի տես այս ամէնուն . երեսին գոյն նետեց , սկըսաւ զողալ : Գնա՛ , գոչեց հայր , ողբրաձայն եւ լալազին , գնա՛ , հեշտասէրդ թշուառ , հետեւէ մոլութեանդ ,

գգուէ զայն , բայց լաւ զիտացիր որ  
դու եւս , ուշ կամ կանուխ , այս  
սրահ պիտի բերուիս , եւ ասոնցմէ  
մէկուն պէս ատառապիս , եւ պիտի  
ստիպես որ հայրդ մահուանոդ համար  
աղօթէ առ Աստուած :

Երիտասարդը նոյն վայրկեանէն  
ուղղեց իր վարք . սկսաւ նոր կեանք ,  
եւ խոր ծերութեան հասած կ'օրհնէր  
իր հայր եւ կրոէր . ի տես այն օր-  
ուան աեսարանին դադարեցայ սոյն  
մոլութենէն :

Հաւ չմարած կրակ վերստին կար-  
ծարծի եւ կը բորբոքի . զիմէ ուրեմն  
Աստուծոյ որ միայն կարող է ամէն  
մոլութեանց եւ մեղաց հուրն կատա-  
րելապէս մարել :



## Ա.ՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

1. Այս տարուան Օրացոյցին մէջ  
օդի եւ լոյսի վրայ պիտի խօսինք ,  
որք առողջաբանութեան մէջ առաջին  
աեղ կը գրաւեն :

2. Իւրաքանչիւր շնչառութեամբ  
օդէն կառնենք թթուածին եւ փո-  
խարէն կուտանք օդին ածխածին :

3. Զափահաս մը 24 ժամուան մէջ  
9000 լիդր օդ կը ներշնչէ , որոյ մէջ  
1800 լիդր թթուածին կայ . ասոր  
720 լիդրը կը պահէ ներշնչողը եւ  
1000 լիդր ածխածին եւ  $1\frac{1}{2}$  լիդր  
ջուր — շոգի — կ'արտաշնչէ :

4. Թթուածինը մեղի օգտակար ,  
կենսապահ է , ածխածինը վեասակար ,  
մահառիթ :

5. Օդին մէջ շարունակ ածխածին  
կը հոսէ , մարդոց եւ կենդանեաց ար-

տաշնչութեան միջոցով եւ փայտի ,  
ածուխի , ձէթի , կազի եւն . վառե-  
լուն ինչպէս նաև աղբանոցներու եւ  
ու է գարշահոտութեան պատճառաւ :

6. Քիթն է որ մեզ այս թունաւոր  
աեղերէն կզզուշացունէ իր հոտա-  
ռութեամբը , որ իր պահապան ա-  
ռողջութեան , չնչառութեան գործա-  
րանին դուռը կը հսկէ :

7. Բայց որովհետեւ քիթն ալ գար-  
շահոտութեանց վարժուելով իր պարտ-  
փին մէջ կը թերանայ , ուստի միայն  
մաքուր օդէ ապականնեալ օդով գոց  
ուած աեղ մը զացած ատենիս եւ  
չափազանց աղջու գարշահոտութեանց  
առթիւ կրնանք անոր աղջարարու-  
թեան վասահիլ :

8. Օգէն եաւ մարդս նաև արե-  
գակին լոյսին կը կարօտի առողջ մը-  
նալու եւ աճելու համար :

9. Մութ , խաւար , ամպամած մի  
օր կը ձնջէ զմարդ , տխուր եւ թոյլ  
կընէ , մինչ , երբ արեգակ ձեղքէ ու  
փարատէ ամպերն , մարդ վերստին  
կը ստանայ իր զուարթութիւն եւ

կըլայ առոյդ , կայտառ , յուսալից եւ  
յարմար աշխատանքի :

10. Ինչպէս հիւսիսային կողմեր ,  
ուր արեգական ճառագայթներ խիստ  
կարծատեւ են , բայսեր անկատար ,  
տնաս կըլան եւ սակաւ պտուղ կը  
հացնեն , այսպէս նաև՝ արեգական  
ճառագայթներէն զրկուած մարդ մարմ-  
նոյ կատարեալ զօրութեան եւ աճ-  
ման չկրնար հասնիլ . Աւստի

11. Առողջարար է հնար եղածին  
չափ մաքուր օդի մէջ չնչել , այսո-  
ինքն թթուածին ներշնչել եւ ած-  
իածին արտաչնչել ներշնչուած թըթ-  
ուածինը մնուցիչ , կինսատու մտան  
է օդին , արտաշնչուած ածիածինը  
թոյն , ուստի չնչել մաքուր օդի մէջ  
կը նշանակէ կեանքը ներս առնել եւ  
թոյնը դուրս տալ մարմինէն :

12. Առողջարար է խոր եւ յաճախ  
չնչառութեամբ մեր թոքերուն մէջի  
օդը շարունակ նորոգել : Աւստի մա-  
քուր օդի մէջ պայտ ընել չէ այլ  
ինչ քան կեանք ներս քաշել ու թոյն  
դուրս վանել :

13. Առողջարար է բնակած տեղեր-նուս օղը միշտ նորոգել : Սենեկակին տախտակամածին վրայէն ծակ մը մա-քուր օդ առնելու համար եւ անոր հակառակ կողմը ձեզունին տակէն ծակ մը ապականեալ օղը արտաքսե-լու համար — ահա այս է բոլորը Գոր-ծաղրէ ու պիտի ապրիս : Անկողնաւ-րանի , գործարաններու ու ամէն օրն ի բուն եւ զիշերէ մինչ առաւօտ կենալ պարաւորուած տեղերնիս այս-պէս ընել , եւ պատւհաններն յաճախ բանալով կենսատու օդ ներս հրաւի-րել — ամէն մէկը կրնայ որ կուզէ առողջ ըլլալ :

14. Առողջարար է քիթէն շնչել եւ ոչ թէ բերնէն . բաց քու քիթդ , գոցէ՛ բերանդ որով մարմինդ կըլլայ առողջ : Քիթով շնչողն հարրուխի չէ ենթակայ , քանզի քիթին մէջէն անց-նող օղը հոն կը տաքնայ եւ ապա թոքերը կը մտնայ :

15. Ապառողջ է սակայն փոշիով լի օդի մէջ շնչել եւ գործել . փոշին մէկ մասը թոքերուն խռոչներուն

մէջ կը մնայ . Յօրդ տարիքին մէջ այսպիսիք մէկ կրամ փոշի ունին թո-քերուն մէջ . ասկէ բնաւ չեն կրնար ազատիլ . ընդհակառակն տարուէ տա-րի կաւելնայ փոշին եւ չնշառութեան գործարանք կը խանդարին . տեւա-կան հարբուխ , հազ , նիհարութիւն , թոքախտ փոշին գործած աւեր-մունքն են :

16. Ապառողջ է բազմութեամբ լեցուած սրահներու մէջ երկար ժա-մանակ կենալ եւ այսպէս այլոց թու-նաւոր արտաշնչութիւն ներշնչել . զինետուններ , քազինօններ , սրճա-առուններ , թատրոն , ճաշարան այս-պիտի թոյններ արտազրող տեղեր են . հոն շատ յաճախողներ հիւանդութեան սերմեր կընդունին :

17. Ապառողջ է օդի հոսանքի մէջ կենալ . որով մարմնոյ միայն մէկ մաս շօշափուելով կը զովացունէ . այս բացօթեայ տեղ մը կենալ եւ մէկ կող-մէն ծակէ մը օդի հոսանքի ենթար-կել զանձն , որով հոսանքի ենթար-

կեալ մասին արիւնը կը պազի . շընչառութեան գործարանաց տկարութիւնք , հարբուխ , հազ , այս պատճառաւ կը պատահին :

18. Ապառողջ է պատռւհան չունեցող , մառանի նիսն , տեղեր քրնանալ . այն: այրի նման տեղեր . ուր ո՞չ օդ եւ ո՞չ լոյս կը մտնէ — իսուները — շատ մը հիւանդութեանց ծընընդավայրն է :

19. Ապառողջ է վառարանով տաքցած սենեակի մէջ քնանալ . առանց բժիշկէ արտօնութիւն ստացած ըլլալու : Միայն փոքրիկ երախաներուն պառկած սենեակ ձմեռը քիչ մը տաքպահելու է :

20. Ապառողջ է բնակած ու քնացած սենեակին մէջ կահ կարասիք լեցունել , ուր շնչառութեան գործարանաց այնքան վեսակար հզող փոշին հաւաքուելու տեղ կը գտնէ . նոյնպէս զօրաւոր եւ զէշ օդ պարունակող սնօթներ սենեակը պահելու չէ : Եթէ այս անհնար է փոքրիկ աղայք գանուելուն պատճառաւ ,

պէտք է որ այսպիսի անօթներ լաւ գոցուած ըլլան կափարիչով սնառուկի մէջ :

### ԱՐԵԽԻ ԼՈԳՈՆՔ

Տր. Ռ.իլորն կըսէ , Մարմնի գոյնին համար , արեան շրջանին համար , անարիւնութեան համար եւ անքնութեան համար յաճախ արեւի լոգանք ըրէք : Կըսէ թէ արեւը մարմնին ջուրի չափ հարկաւոր է , եւ թէ ինչպէս գեղեցկացուցիչ նոյնպէս ալ լաւագոյն տեսակ զօրացուցիչ է : Կըսէ , Բոլոր զգեսաներզ հանէ եւ արեւի ճառագայթներով ողոգուած սենեակի մը մէջ նստէ կամ պառկէ : Յաճախ փոխէ զիրքգ . այնպէս որ մարմնիդ բոլոր մասերը արեւին ճառագայթներուն մէջ բերուին : Սրեւէն այրուիլը կամ կարմըրիլը չվեսաեր մորթը , այլ կը զօրացնէ եւ օգուա կընէ : Կըսէ յիշեալ բժիշկը նաեւ թէ այս զարմանը կը կազզուրէ ամբողջ մարմնը , պազ առնելու դէմ կը պաշտպանէ եւ կը

զարգացնէ կազմութիւնը աւելցնելով  
առուղութիւնը եւ ոյժը :

ԽՆՉՈՐԸ

Տր. Ուիլսօն կըսէ թէ խնձորը այն-  
պիսի հաստրակ պառւղ մըն է որ քի-  
չեր ծանօթ են անոր նշանաւոր ազ-  
դեցիկ զեղարանական յատկութիւն-  
ներուն, Ամէն մարդ պէտք է զիտ-  
նայ թէ լաւագոյն բանը որ կրնայ ը-  
նել՝ անկողին մանալէ անմիջապէս  
առաջ խնձոր մր ուտելն է, Խնձորը  
ուղեղի համար զերազանց պառւղ է,  
վասն զի աւելի շատ փոսփորական  
թթու ունի զիւրամարսելի ձեւի տակ,  
քան ուրիշ ծանօթ ո եւէ պառւղ:  
Կը գրգռէ լեարզին գործողութիւնը,  
առողջ քուն կու տայ եւ կատարելա-  
պէս կը հականեխէ բերանը, Նաեւ ի  
մի կը ժողովէ սատմոքսին աւելորդ  
թթուուաները, կօգնէ երիկամունքին  
հիւթանջատումին (հիւթերն իրարմէ  
զատելու գործողութիւնը) եւ կարդիլէ  
միզաքարի զգացումը, մինչ կարգիլէ

զժուարամարսութիւնը եւ կոկորդի  
հիւանդութիւններու գէմ լաւագոյն  
գեղը եւ նախապահեստ զարմանն է:  
Լիմոնէն եւ նարինջէն եւաքը նաեւ  
լաւագոյն խափանարարն է ալքոլի եւ  
ափիոնի փափաքին:

Պառւղը կրնայ Բնութեան գեղօրէն  
կոչուիլ: Ամէն մէկ խնձոր, ամէն  
մէկ նարինջ, ամէն մէկ սալոր եւ  
ամէն մէկ խաղող չի մը զեղ է: Նա-  
րինջին չորս մասէն երեքը ջուր է  
Բնութեան աշխատանոցին մէջ թոր-  
ուած, Բայց այս ջուրը ճոխ է մաս-  
նաւոր պազային թթուներով որոնք  
զեղարանօրէն հաւասարակշռուած են,  
եւ մասնաւոր կերպով կը մարեն ար-  
բեցողին ծարաւը, եւ կամոքեն ստա-  
մոքսին հիւանդութիւնը վիճակը, Երբ խմե-  
լու փափաքն արթնցած ժամանակ  
խնձոր մը կամ նարինջ մը ուտուի,  
ընդհանրապէս կը ջնջէ այդ փափաքը,  
եւ ամէն մէկ յաղթութիւն նուազ  
զօրաւոր կընէ ամէն մէկ յաջորդ փոր-  
ձութիւն: Թարմ պառւղները եւ հիւ-  
թեղ բանջարեղէնները այնքան հաս-

տատուն սնունդ չեն տար , որքան կը  
հայթայթեն արեան մաքրութեան հար-  
կաւոր թթուները եւ աղերը . Երբ ա-  
րիւնը անգամ մը մաքրուի , ամէն  
անգամ որ անոր սնուցիչ հոսանքը  
թրջէ մարմինն զանազան հիւսկէն-  
ները , մաս մը անմաքրութիւն դուրս  
կարտաքսէ , եւ ետեւը . կը թողաւ ա-  
ռողջ հիւսկէնի հիւէ մը , մինչեւ որ  
կու զայ ժամանակ երբ արբեցողը կը  
մաքրուի եւ առողջ անձ մը կըլայ :

### ԳԻՐՈՒԹԵԱՆ ԳԱՐՄԱՆՆԵՐ

Մատամ Ամէլիէս որ զիրութեան  
զէմ շատ մը զարմաններ փորձեց բայց  
արդիւնք չտեսաւ , շատ պարզ կեր-  
պով մը յաջողած է իր մօի մեծ զան-  
զուածը պատիկցնել : Իր սովորական  
կերակուրը փոխած չէ . բայց ամէն  
ինչ որ բերան կառնէ , այնքան շատ  
կը ծամէ որ կոկորդէն վար կը սահի  
առանց կամաւոր ճիզի մը : Բան մը  
բոնի չկլեր : Այս բանն առաջին մտա-  
ծութեամբ թերեւս անկարելի թուի ,

բայց պարզ փորձ մը պիտի համոզէ  
ո եւ է մէկը թէ գործադրելի է : Ոչ  
միայն հաստատուն կերակուրն այս-  
պէս կը ծամուի , այլ նաև ամէն աե-  
սակ հեղանիթներ . թէյ . իտանուէ ,  
կաթ , զարեջուր , եւ լն . Տնտեսագի-  
տական ահսակէտով ուտելու այս նոր  
մեթոդը շատ գոհացուցիչ է , վասն զի  
անոր հետեւելով մարդ չկրնար սո-  
վորական կերպով կերած ուտեսատին  
կէսէն աւելին ուտել : Երբ կերակուրը  
կատարելապէս կը ծամուի , անօթու-  
թիւնը շուտով կանցնի : Եւ բժիշկ-  
ները երկար տտենէ ի վեր ըսած են  
թէ մարդիկ շատ մը աւելի կերտ-  
կուր կուտեն քան զոր պէտք է տ-  
ոողջ եւ զօրաւոր պահուելու համար :  
Վերոյիշեալ տիկինը տասներկու ա-  
միս յետոյ ինքզինք 18 քաշ թե-  
թեւցուցած էր՝ կերակուրն այդ կեր-  
պով ուտելուն համար :

ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՀՈՒԻ ԲԱՐՑՐԱԳՈՅՆ  
ԱՌԱՊՃՈՒԹԻՒՆ

Տ.ք. Մայրըս էտուրն, Նիւ եռքի ամինէն համբաւաւոր բժիշկը, երբ մտերս իրին հարցուեցաւ թէ ի՞նչ են մէկ քանին այն եղանակներէն որոնց- ուով բարձրագոյն առողջութիւնը կը պահուի, պատասխանեց, «Կրօնական ուստան մէջ կը գանենք առողջապահական ամինէն բարձր կանոնները որ երբեք մտածուած են, Ով որ ճշդիւ կապրի Քրիստոնէութեան սկզբունք- ներու համաձայն, իր մարմինը կա- տարեալ առողջ վիճակի մէջ կը պա- հէ : Իրաւամբ ըսուած է թէ «մեզաց վարձքը մահ է.» եւ մահը արդիւնք է մոլութեան . Մոլի անձ մը իր մարմ- նին մէջ կը կրէ բուն իր կորատեան սերմը : Ճշմարտապէս բարի մարդք յարմարագոյն անձն է ախտերու ընդ- դիմանալու եւ քաջառողջ ապրելու համար »

—

ՕՂԻՒՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄՏՔԻՆ ՎՐԱՅ

Թէ՛ բնալուծարաններու, թէ՛ ան- զամասու թեան եւ յօշոտաման սրաննե- րու մէջ կակուզնիւթ մը կարծրացը- նելու համար օզիի մէջ կը զրուի : Եր- բևմն մարդկային ուղեղը հանուելէ ետքը քննութեան համար քիչ մը կարծրանալով զիւրին հետազօտելու հպտակաւ քանի մը օր զօրաւոր օ- զիի մէջ կը զրուի : Շատ անդամ յօ- շոտաման սրաններու մէջ երբ մեռած զինսմոլներու ուղեղը բացուած է, երբեք չորս գաւոթ օզի զտնուած է, այսինքն օզին խմուելէն ետքը եր- բեք փոփոխութեան մը չենթարկուե- լով գացած ուղեղին մէջ հաւաք- ուած է : Ահա այս պատճառաւ այն փափուկ եւ կակուզ ուղեղը կը կարծ- րանայ, զգացման այն կեղրոնը կը նեղնայ, կամփոփուի, եւ ումանցը երբեք չկրնար զործել, եւ այսպէս մարդ կըլայ ապուշ, ցնդած, տիմար եւ յիմար բան մը : Շատ անդամ անոր

մաքին կարողութիւնները ա'յնքան կը  
ակարանան որ աղայ մը անդամ մեծ  
զինով մը կը ծաղրէ եւ կը խաղցնէ :  
Վերջին տարիններուս վիճակազրու-  
թիւնները կը ցուցնեն թէ մարդկային  
ընկերութեան մէջ օր ըստ օրէ կաւել-  
նան խելագարները, զիննեմողները, ա-  
պուշները, ախմարները, ցնդածները  
եւ յիմարները : Յիմարանոցները եւ  
չիւանդանոցները լեցուն են օղիէ յի-  
մարացողներով եւ ախտացեալներով :  
Գաղղիոյ յիմարանոցներուն մէջ զբա-  
նուող խելագարներուն հարիւրին Յօր  
օղին զոհ գացած են . Անզիոյ մէջ՝  
հարիւրին Յօր . Մասաշուսեց նահան-  
գին մէջ՝ հարիւրին Յօր . Փեթըրս-  
պուրկի յիմարանոցին մէջ գտնուող-  
ներուն մեծ մասը օղիի պատճառաւ  
խելագարած են : Երեւելի բժիշկ մը  
կը զրէ թէ բովանդակ աշխարհի յի-  
մարանոցներուն 10էն նը օղիի պատ-  
ճառաւ խելագարածներով լեցուած է:  
Ո՞րքան բազմաթիւ իմաստուն, կա-  
րողութեան տէր, եւ մարդկացին սե-  
ռին օրհնութիւն ըլլալու յարմար ձիր-

քերով օժաւած անձինք կը սպասեն  
յիմարանոցներուն խորշերուն մէջ :  
Ե՞նչ ողբալի վիճակ է այս : Բայց  
միայն ա՞յսչափ են օղիին զործած  
նախճիրները . Ոչ, աւելի գէշը կայ .  
օղին մարզուս սերունդն ալ կաւրէ  
կապականէ : Ո՞րքան անմեղ մանուկ-  
ներ կոյր, անմիտ, ապուշ, եւ արիւ-  
մար կը ծնանին եւ կը մեծնան :

Ընտանիքի մը մէջ եօթը մանուկ-  
ներ ծնան, ամէնն ալ ապուշ եւ արիւ-  
մար . վասն զի անօնց թէ՛ հայրը,  
թէ՛ մայրը օղի կը զործածէին : Տր-  
քէլոգ ըսած է թէ . « Սշխարհ ետ  
երթալ սկսած է, վասն զի օղին մարդ-  
կային սեռը կապականէ : »

ԿԵՆԳԱՐԱԿԱՐ Ա.Ռ.ՊՂ.ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ  
ԱՆԱՍՆՈՑ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՆ Ա.Ռ.ԹԻՒ

Կենդանիներն ալ մեզ նման՝ օղի,  
լոյսի եւ մաքրութեան պէտք ունին :  
Անոնք ալ մեզի պէս տաքէ ու ցուր-  
տէ կը նեղուին :  
Օդ, — Գոմերը զրէթէ միշտ հակա-

սողջապահիկ հանգամանաց մէջ կը  
գտնուին , մթին , ոչ օդասուն , ցած  
հողով եւ առաստաղով : Այդպիսի  
գոմերու մէջ կենդանիք իրենց կեան-  
քի էական առարբերէ զրկուած ապ-  
րելով , տրտաղրածնին ալ քիչ ու  
ստորին կըլլայ . կենդանիներու մե-  
ծագոյն մասն այս աննպաստ հանդա-  
մանքներու համար կանխահաս մահ  
մը կունենան : Ամէնէն էական բանն  
է գոմի օդն յաճախակի փոխելը , պէտք  
է որ գոմի պատուհաններն այնպիսի  
դիրք մ'ունենան , որ օզը վերէն փոխ-  
ուի եւ երբեք օդի հոսանք չունենայ .  
Պէտք է ոչ միայն փոխուած օդ մը ,  
այլ նաև ամէն մէկ կենդանիի զատ  
զատ բաւելու չափ օդ : Ուստի մեծ  
սխալ մէ միեւնոյն ախոռի մէջ պէտք  
եղածէ աւելի կենդանի պահելը :

Լու ձնունդ . — Ձմեռը կրցածնուդ  
չափ արջառները կերակրեցէք : Ազրի  
խնդիրն ի բաց առներով՝ որոյ արժա-  
նիքը տրուած մնունդի ընարութեան  
հետ ուղիղ կը համնմատի , ուրիշ պատ-  
ճառներ եւս կան . առաջինն այն է որ

լաւ սնունդ մը կենդանիները ձմեռը  
տաքցընելու համար լաւագոյն ջեռու-  
ցին է . երկրորդը՝ միւս խնամքներն  
ապարդիւն կը մնան երբ մարմինը  
տկար սնունդի պատճառաւ կորով  
չստանայ :

Լոյս . — Լոյսն ալ միեւնոյն սկրզ-  
բունքով , ինչպէս տուներու , նոյն-  
պէս ալ ախոռներու համար անհրա-  
մեշտ պէտք մ'է : Մաքրութիւնը  
ճարպաւորելու համար նպաստաւոր  
է , — որովհետեւ լոյսի պակասու-  
թիւնը կը նուազեցնէ արեան կենսա-  
կանութիւնն եւ ճարպը կը շատցնէ ,  
— որ կենդանիներու աճման եւ բար-  
ոք առողջութեան մեծ արգելք մ'է .  
մարդ երբ արջառ կը պահէ կարծենք  
անկէ սպասածը ճարպէ տարբեր բան  
մ'է : Ուրեմն լոյսը գործարանաւոր  
էակներու (կենդանիք եւ բոյսք) հա-  
մար էական ասար մ'է : Ստուգուած  
իրողութիւն մ'է թէ կովը՝ մութ ա-  
խոռի մէջ պահուելով քիչ կաթ կու-  
տայ , իսկ լուսաւոր ախոռի մէջ՝ ա-  
ռատ :

Մատքութեան . — Զի բաւեր միայն  
ազրերը վերցնելով , մառըները մաք-  
րելով՝ ախոռը ի ներքուսա մաքուր  
պահել , ապա նաեւ կենդանիներու  
մարմնական մաքրութեան եւս հոգ  
տանելու է : Կովին պոչը միշտ վեր-  
ջին ծայր մաքուր պահելու է , որով-  
հետեւ կովերն իրենց մարմնոյն քե-  
րուած տեղերը միշտ պոչովնին կը  
ծեծին , մանաւանդ ծիծերնին : Մարմ-  
նոյ մաքրութեան ալ հսկելու է : Մե-  
ծագոյն մասին վրայ , մտնաւանդ ե-  
րիասարդներուն՝ մակարոյձներ կը  
գանուին , որք ախոռի տաքութեան  
ազգեցութեամբ կը շտանան եւ զի-  
րենք նեղոզ մորթային հիւանդու-  
թիւններու պատճառն . ընդհանրապէս  
այդ մակարոյձներն են : Թէ՛ ծիերու  
եւ թէ կովերու համար վրձինն եւ  
քերիչը անհրաժեշտ են : Ոչ միայն  
մարմինը մաքուր պահելու կը ծառա-  
յեն , այլ նաեւ մորթի պաշտօնները  
գործունէութեան մէջ կը գնեն , այ-  
սինքն արեան շրջանին արտաշնչման  
կը նպաստեն եւ կարգ մը հիւանդու-

թեանց առաջքը կ'առնեան : Առողջա-  
պահութեան համար պէտք եղած այս  
երեք պայմաննք՝ օդ , լոյս եւ մաք-  
րութիւն , պէտք են ոչ միայն ծիե-  
րու ախոռին , արջառներու գոմին եւ  
փարախին համար . հապա նաեւ խո-  
զանոցներու եւ ճագարանոցներու  
համար : Շատ լաւ սովորութիւն մ'է  
երբեմն երբեմն գոմը կրաջրով կամ  
ասիտ ֆէնիքի խամնուած ջրով լուալ  
պատերը , մառըր , մառըրի վանդակ  
ները , եւայն : Զէ՞ք զիտեր թէ՛ այս  
կերպով ի՞նչ անհուն ճճիներու , ու-  
տիճներու վեասակար միքրոպներու .  
անհունապէս փոքրերու մեծկակ բա-  
նակ մը կը ջնջէք , եւ որով կենդա-  
նիք մեծապէս կ'օգաուին :

## ԳԻՏԱԿԱՆ

ՔԱՆԻ ՏԱՐԻ ԱՊՐԻԼԸ ԳԻՏԱԿԱՆ

ԵԼՆԵԼ ՎԻԵՐԻՆ , ՃԱՇՆԵԼ ՄԱՍԻՆ ,  
ԸՆԹՐԵԼ ՎԻԵՐԻՆ , ՊԱռԿԻԼ ՄԱՍԻՆ ,  
ՄԱՐԳՍ ՀԱՍԳՆԷ ՄԱՍՆ ՀԵՂ ՄԱՍԻՆ ,  
ԿՐԱԷ Առած մը .

Հիմա , սիրելի ընթերցո՞ղ , կուզես  
հասկնալ թէ քանի՞ տարի պիտի ապ-  
րիս : 86 թիւն հիմ բռնէ , 12 տարե-  
կանէն վեր ինչ տարիք որ ունիս այս  
86 թիւէն իջեցուր , մնացած թիւն  
երկու քով բաժնէ , ինչ թիւ որ ելնէ ,  
այնչափ տարի եւս պիտի ապրիս : Կը  
մազթեմ որ այս կանոնը ուուտ ելնէ ,  
եւ ինչ որ ծերտնին Գօննատօն իր  
զիրքին վերջն ըսած է , ես ալ պիտի  
կրկնեմ . «Ապրէ՛ , երկար տպրէ՛» :

Դ. ԽՈՐԱՍԱՆԻՆԻԱՆ

Լոնտոնի Լէնուշի հանդէսին մէջ կը  
կարգացուի կնոջ մը հետաքրքրաշարժ

բժշկութիւնը : Կով մը եղջիւրներովը  
կնոջ փորին զարնելով զուրս թափեր  
էր անոր ազիքները : Կինը որ քառ-  
սուներկու տարեկան էր , օդին մէջ  
նեառւած էր , եւ տեսնուեցաւ որ  
փորին վրայ սաստիկ վէրք մը բաց-  
ուած էր որուն մէջէն քսան ոտք բա-  
րակ ազիք զուրս թափուած էր : Բը-  
ժիշկները վէրքը լոււացին ասէո ֆե-  
նիչի տկար լուծուածով եւ սկսան ա-  
ղիքները զեաեղել : Խորունկ կարուե-  
ցաւ վէրքը բայց առանց փորամաշկին  
զպչելու : Ի սկզբան կարծուեցաւ թէ  
հիւանդղը պիտի չապրէր այս . զործո-  
ղութենէն ետքը , վասն զի ցնցիւնը  
սաստիկ եղած էր . բայց բարեբազ-  
դապէս ոչ արիւնհոսութիւն եւ ոչ  
մեաս մը տեղի ունեցաւ աղիքներուն  
մէջ : Ու երբ զեաեղումը լմնցաւ եւ  
վէրքը կարսւեցաւ , կինը ըսաւ թէ  
հանգստութիւն կը զգար : Անկէ ետքի  
պատմութիւնը շատ գոհացուցիչ էր ,  
եւ արկածէն երեսունըհինգ օր ետքը  
կինը կը պարտէր ասզին անդին եւ  
թեթեւ զործեր կընէր :

Անոնքների կենութիւնը բժշկական համացեսին մէկ թղթակիցը կ'ըսէ թէ ինք ծեր զինուորի մը զիազննութիւնը կատարեց : Զինուորը 1861ին վիրաւորուած էր : Վէրքը յառաջ եկած էր քթէն լեցուող հրացաններու տեսակէ եղող փոքր հրացանի մը գնտակէն : Գնաակը սրտին պատին մէջ զետեղուած էր , ձախ խոռոչին վարի մասին մօտ : Մրախն վրայ ուսւէ գէջ ներգործութիւն եղած չէր , կատարելապէս բնական վիճակի մէջ կը զըտնուէր այն . Պատերազմէն ետքը մարդը ազարակի մը մէջ գործաւորութիւն ըրած էր երեսունը օթը տարի : Մահուան պատճառն եղաւ բազուկի քաղցկեզը :

Ամենէն հին , օթեկ (պայտ) հացը Ասորեսատանգուց մէկ նկանակն է զոր գտած է Գաղղիացի խուզարկու մը Մ. Մոնթոն : Սյս նկանակը կը կարծուի թէ խմորած եւ եփուած է Ն. Բ. 560ին : Գնդաձեւ է եւ փափուկ թուլս գոյնով : Կ'ըսուի թէ անաղարտ

վիճակի մէջ է , գտնուած ըլլալով քանի մը աւելի մանր նկանակներու հետ եւ փաթթուած՝ բրդեղէն կտաւի մէջ եւ կնքուելով գերեզմանի մը մէջ դրուած , Ասորեսատաննեայց եւ Եզիատացոց ընդհանուր ոովորութեան համաձայն : որք կերակուր կը գնէին նշանաւոր վախճաննեալներու գերեզմաններուն մէջ :

Որոշելու համար թէ մահը իրական է թէ առերեւոյթ , պէտք է վիրարոյժի աքծանով (Քլաս) մորթը բռնել , վեր քաշել եւ ուժով սեղմել , եթէ աքծանը մէկ կողմ առնուելէն ետքը մորթը բոլորովին տեղը չիջներ , եւ եթէ աքծանին ակռաներուն խոռոչները կը մնան այնպէս , մահը իրական է : Մինչ ընդհակառակն , եթէ արեան շրջանը կը շարունակէ . մորթին ծալքը եւ աքծանին ակռաներուն նշանները կ'աներեւութանան : Դարձեալ . եթէ մահը իրական է , աքծանով ճնշուած մորթը մագաղաթի երեւոյթ կ'առնէ :

ԱԿՈՒԱՆԵՐՈՒ ՀԱՇՈՒՄ ԵՒ ՏԵՎՈՒՄ

Երրեմն ըսուած է, «Ի՞նչ աղէկ կ'ըլլար եթէ լեցուելու պէտք ունեցող ակռան հանուէր, լեցուէր եւ նորէն աեղը հաստատուէր»։ Այս շատ անգամ եղած է, բայց այնպիսի գործողութիւն մըն է որ չկրնար ընտրուիլ հաճոյքի համար, Ընարուած է միայն իբրև վերջին ճիզ մը ախտաւոր վիճակ մը բուժելու համար։ Հանման գործողութիւնը մեծ արժէք ունի երբ ակռան կը քաշուի բուժում մը կատարելու համար։ Ոեւէ պատճառաւ ընդունուած յանկարծական հարուած մը մէկ կամ աւելի ակռաներ կրնայ բոլորովին հանել իբրնց խոռոշներէն։ Այնպիսի ժամանակներ ակռաները պէտք է որ զգուշութեամբ պահուին, եւ հիւանդը ատամնաբոյժին երթայ ըստ կարի շուտով։ Ատամնաբոյժը կ'առնէ ակռան կամ ակռաները, կատարելապէս կը մաքրէ զանոնք, կը լեցնէ ջիղերու ճամբաները եւ ծակերը, եթէ կը գտնուին։

Յետոյ զգուշութեամբ կը լուայ ակռային խոռոչը, եւ ակռան կամ ակռաները նորէն կը տանի ամրապէս կը հաստատէ իբրնց տեղերը, Երբ այսպէս անգամ մըն ալ իբրնց տեղերը կը հաստատուին անոնք, պէտք է բաւական ատեն սպեզանի մը զնել, եւ սովորաբար կ'ամրանան եւ լաւ կը ծառային։

Իսկ անկման գործողութիւնը աւելի նոր ծագում ունի նոր խոռոչ մը կը շինուի արհեստականապէս, այն աեղը ուրկէ նախոկին բնական ակռան ինկած է տարիներէ հետէ։ Լինար զգուշութեամբ կը բացուի, եւ ոսկորին մէջ փոքրիկ գանկաշաղափ մը կ'անցուի, այնունեաեւ յարմար ծակիչներով կը բացուի նոր խոռոչը ուղուած ձեւով։ Տեղը զրուելու ակռան կրնայ քանի մը ամիսներ առաջ հանուած ըլլալ։ բայց յարմար կերպով պատրաստուած ըլլալով կը զետեղուի իր նոր տեղը եւ ամրապէս կը հաստատուի, Բնութեան թողլով աւելի հաստատելու պաշտօնը։

Այս գործողութեան զիմաւոր արժէքը կը կայանայ սա բանիս մէջ որ հարկ չէ արհեստական ակռաներ զնել քանի մը ակռաներ պակաս ըլլալուն համար, եւ նոյն ժամանակ բնական ակռաները նորէն ստանալ ծամելու գործողութեան համար, Հականեխական նախազգուշութիւններ շատ կարեւոր են. նաեւ պէտք է բերանը լուալ յարմար կերպով, մինչեւ որ վէրքը բուժուի :

ԳՈՐԾԻՆ ՇԱՊԻԿ ՓՈԽԵԼԸ

Պայծառ առաւօտ մը, կըսէ բժիշկ է. Տ. Պինքըրտ, կը պարտէի պարտէցիս մէջ, եւ տեսայ միջակ մնձութեամբ գորտ մը, Թուեցաւ թէ մասնաւոր կարողութիւն մը ունէր ուղած ատենը իր մորթը թրջելու եւ նորէն չորցնելու արագ արագ: Մորթին թրջուած վիճակին մէջ ունեցած փայլուն երեւոյթը ուշադրութիւնս գրաւեց, եւ կեցայ դիտելու համար թէ ի՞նչ պիտի հետեւէր Շուտով անյայտ

եղաւ բոլոր խոնաւութիւնը Թուեցաւ թէ կենդանին խոնաւութիւնը ծծելու եւ յետոյ նորէն դուրս տալու կարողութիւնն ունէր:

Մեծ եղաւ զարմանքս երբ գորար կայծակի արագութեամբ քանի մը շարժումներ ընելով մերկացաւ իր վերնամաշկը Գորար զարձաւ եւ մէկ անգամուն կուլ տուաւ իր հանած մորթը, եւ յետոյ սկսաւ իր ոստիւններն ընել նոր եւ ողորկ կերպարանքով:

Ուրեմն պաղարիւն գորտն ալ պաղարիւն օձին պէս կը հանէ իր մորթը, այսինքն շապիկ կը փոխէ, բայց որովհետեւ հոգ կը տանի հանած մորթը կլլել այսպիսի կայծականման արագութեամբ եւ հրանալի ճարտարութեամբ, այս կերպարանափոխութեան ապացոյնները չեն մնար ինչպէս կը մնան օձինները, վասն զի օձը իր ետեւը կը թողու մորթը:

Ա.ՊԱԿԻԵ ՏԱ.ՊԱ.ՆԱ.ՔԱ.ՐԵՐ

Անգղիոյ մէջ, ապակիի գործարա-

նատէր մը , վերջերս փորձ մը ընելով , կ'ապացուցանէ թէ սովորական քարով շինուած տապահնաքար մը , կարծր մարմարիոնէ , եւ կամ կրանիթէ շինուածներէն շատ աւելի երկար տարիներ պիտի կրնայ զիմանալ :

Հովք , անձրեւը , տաքութիւնը եւ ցուրտը կրնան այլակերպել նոյն խոկամենակարծր քորերը , մինչդեռ ապակին զրեթէ չապականիր :

Կարծր կրանիթը կրնայ վերջապէս փշրիլ եւ մարդ 50 տարուան տապահնաքարերուն վրայ գրուած արձանագրութիւնները զժուարաւ կրնայ կարդալ ընդհակառակն ապակիէ տապահնաքար մը յաւերժական յիշատակարան մը կրնայ ըլլալ :

### ՏԱՐՈՐԻՆԱԿ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ ՄԸ

Սէրբէ հարեւ . — Բրուսիոյ ելաբէր-փէլտ քաղաքին մէջ բժիշկ մը , Տքթ . Բաձէնսթէքթր , սրտի վիրաբուժական յանդգնագոյն գործողութիւն մը կատարեր է մօտերս 17 տարեկան

նորատի տշակերտի մը վրայ՝ որ մահացու վէրք մը ընդունած էր : Այս պատանին դաշոյնի ձեւով դանակի հարուած մը առեր էր իր մէկ ընկերէն ձախ կողին վրայ , Դահակին բերանը ն սանդղիմեզր երկայն էր : Վիրաւորեալն հազիւ մի քանի քայլ առնելէ յետոյ գետինն ինկեր էր անզգայ եւ երկու ժամ յետոյ հազիւ խելքը վլուխն եկաւ հիւանդանոցի մէջ ուր փոխազրուեր էր : Վէրքին փոքր բերնէն սեւ արեան հեղեղ մը կը հեղուր եւ յայտնապէս կը ծանրանար վիրաւորեալին վիճակը : Այս դիրքի մէջ որոշուեր է վիրաբուժական գործողութիւն մը ընել , որոյ համար պատանիին կողիկներէ մէկը կարել հարկ եղեր է , միրա որոշ մերկօրէն տեսնելու համար : Բժիշկը կը տեսնէ որ սրտին թելը կարած է դաշոյնի հարուածէն . ուստի վէրքը քիչ մը աւելի կը լայնցնէ եւ չորս թելով սրտին ջիզը կը կարէ : Այս զժուար գործողութիւն փափաքուած արդիւնքը կունենայ : Արեան հոսումը կը դադրի

անմիջապէս . եւ վիրաւորն որ ստոյդ  
մահուան մը գատապարտուած կը  
կարծուէր , կեանքը կը վերստանայ ,  
Վէրքը փութով կ'սպիանայ եւ առանց  
տենդի . սիրտն հանդարտօրէն իր գոր-  
ծին տրոփն ու շարժումը կ'ստանայ ,  
եւ ինը շարաթ վերջն հիւանդն ամ-  
բողջապէս եւ կատարեալ բուժուած  
կարող կ'ըլլայ հիւանդանոցը թողու ,  
ի զարմանս ամենեցուն :

ՇԽՁՈՒԿԸ ԵԽ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ

Հնարիչն է Ֆրանսացի գեղագործ  
մը , որ երկար ատենէ ի վեր ալքոլա-  
մոլութեան դարմանը գտնելու կերա-  
զէր , եղթ գաղափարն ունեցաւ շի-  
ճուկը փորձելու այդ մոլութեան դէմ :  
Այս նպատակաւ ձի մը առաւ , եւ ա-  
նոր տուած առօրեայ վարսակին մէջ  
գորաւոր ալքոլ (trois-six) մը խառնեց  
եւ անասունին տուաւ , հետզհետէ  
ալքոլին աստիճանն ու քանակը զգա-  
լապէս բարձրացնելով , այնպէս որ ձին  
սկսաւ մեծ ախորժ զգալ այս խառ-

նուրգէն , եւ օրական տաշտ մը օղի  
կը խմէր 100ին 90 ալքոլով խառ-  
նուած : Դեղագործն այլ եւս ալքո-  
լականութեան ենթարկուած նկատելով  
ձին , սկսաւ իր փորձերուն Միեւնոյն  
եղանակով ուրիշ կենդանիներ , ինչ-  
պէս ճագարներու , բագերու , հաւե-  
րու քօնեաք խմելու վարժեցուց : Յե-  
տոյ արիւնի քանի մը կաթիլ առնելով  
ալքոլական ձիէն միւս կենդանինե-  
րուն ներարկեց . ասոր արդիւնքը սա  
եղաւ որ այդ վայրկեանէն սկսեալ՝  
ալքոլամոլ անասունները բուռն սար-  
սափ մը կզգային ալքոլէն : Իրենց կե-  
րին խառնուած ամենափոքր քանա-  
կութեամբ ալքոլն անգամ ախորժակ-  
նին կը գոցէր . երբ ալքոլի շիշ մը  
տեսնէին , խսկոյն հեռու հեռու կը փա-  
խէին . զինովի մը հանդիպումը նող-  
կանք կազզէր իրենց :

Գիւար կատարուած էր , միայն կը  
մնար մարդոց վրայ կիրարկել : Առա-  
ջին ներարկումէն խոկ' ամէնէն խմանն  
ալ անհանդուրժելի գարշանք մը կը  
զգար ամենափորձիչ օղիի սրուակին

առջեւ . հանքային ջուրեր խմելու կը վախնար , մի' գուցէ ծայրայեղութիւն մը գործէ : Հնարիչ դեղագործը շատ մը այս կարգի ալքոլամոլութենէ բուժուածներու օրինակներ առաջ կը բերէ . ի մէջ այլոց ապսէնթամոլ մը , որ հիմա զլուխն անդին կը դարձնէ երբ զինովի մը հանդիպի : Երեւակայեցէք այնպիսի խման մը որ առաջ տակառին տակ կը պառկի եղեր , ինչպէս կըսեն , երկար տարիներէ ի վեր ճշմարիտ այդ խմանը հիմա հանդիսաւոր պարագաներու մէջ իսկ հազիւ հազ շրթունքին կը համարձակի ոգելից ըմպելի դպցընել : Հրաշալի չէ՞ք գտներ ասիկա : Անկարգ ու խման ամուսին մը շիճուկի ներարկումով ժուժկալ ու պարկեշտ մարդ մը դարձնել : Շիճուկ մը մարդուն բարոյականը կը բարձրացնէ :


Բայց ասիկա դեռ սկզբնաւորութիւն մընէ : Հնարիչը ճամբայ մը բացած է , որուն պիտի հետեւին ուրիշ գիւտեր ալ : Հետզհետէ մեր մոլութիւնները պիտի անհետանան մէկիկ մէկիկ :

Զ. Ն.

Մարդկային մարմնոյն մէջ կը գըտնուի այնչափ երկաթ որով կարելի է շինել ութև խոշոր գամ , այնչափ ճարակ՝ որով կարելի է շինել տասնըշորս լիպրա մոմ , այնչափ բնածուկս՝ որով կարելի է շինել 65 կրոց (9360 հատ) մասիտ եւ այնչափ լուսածին (ֆոսֆու) որով կարելի է շինել 820 հազար լուցկի : Մարդկային մարմինէն կարելի է հանել նաեւ սուրճի քսան դգալ աղ , յիսուն կտոր շաքար եւ քառասուներկու լիթր կաթ :

Աւսարիոյ եւ իտալիոյ մէջ , կարկուտի փոթորիկին առաջքը կ'առնուի թնդանօթի հարուածներով , (ըլլայ' երկար փողով թնդանօթ , ըլլայ' կարճ փողով եւ լայն բերնով հավան կոչուած թնդանօթ) : Թնդանօթի այս հարուածներ կ'արգիլեն կազմուելու վրայ եղած մրրիկներն ու փոթորիկները . թող չեն տար որ կարկուտը կազմուի եւ երկրի վրայ իյնայ : Միայն Սթիրիոյ նահանգին մէջ կան հարիւրի չափ կայաններ , ուստից մէ-

տէորագէտ պաշտօնեայք թնդանօթ-  
ներ արձակելով կ'արգիլեն փոթորիկը :  
Իտալիոյ մէջ, հազարի չափ կան այս-  
պիսի կայաններ : Այն տեղուանք  
կարկուաթը զբեթէ անցեալի յիշատակ  
մ'է այլ եւս, գոյութիւն չունի :



## ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՐԱԲՈՒԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ալժերիի Շէյխը լսելով որ իր 12  
ցեղերէն մէկուն դատաւորը հիանալի  
արդարութեամբ վճիռներ կ'արձակէ,  
որոշեց անձամբ սառւգել իրեն պատ-  
մուածները . Ուստի ծպտեալ եւ ա-  
ռանձին դատաւորին քաղաքն երթա-  
լու համար ձին հեծաւ եւ ճամբայ  
ելաւ :

Քաղաքին դրան մօտ աղքատ, կաղ  
մուրացիկ մը իրեն վերարկուին ծայրը  
բռնելով ողորմութիւն խնդրեց : Շէյ-

խը քիչ մը դրամ դրաւ մուրացիկին  
ձեռքը . նա սակայն վերարկուն դեռ  
ամուր բռնած կեցած էր :

Ի՞նչ է խնդրածդ, հարցուց Շէյխը,  
ահա ուզածդ տուի :

Այո՛, ըսաւ մուրացիկը, սակայն  
օրէնքը ոչ թէ ողորմութիւն տալ  
պարտք կը դնէ ձեր վրայ, այլ օգնել  
եղբօրդ ո'եւ է կերպով ալ :

Լաւ, ի՞նչ կ'ակնկալէք ինձմէ :

Դուք զիս թշուառ արարածս կըր-  
նաք աղասել . աեսէ՛ք, մարդոցմէ՛,  
ձիերէ, ջորիներէ եւ ուղտերէ ու-  
նակոխ ըլլալու վասնգի մէջ եմ :

Ի՞նչպէս կրնամ ձեզ աղասել :

Զիս ձեր ստին ձիուն վրայ հեծ-  
ցունելով եւ մինչեւ շուկան տանե-  
լով, ուր ես գործ ունիմ :

Շատ լաւ, ըսաւ Շէյխը, եւ ծռե-  
լով կալը վեր առաւ ձիուն վրայ եւ  
ստին տեղաւորեց : Երբ շուկան հա-  
սան Շէյխը հարցուց մուրացիկին թէ  
հո՞ս է իր իշնելու տեղը :

Այո՛,

Է՛, ուրեմն վար իջիր :

Դուն իջիր :

ինչու :

Զին ինծի յանձնելու համար :

Զիս քեզի յանձնել . ի՞նչ է միտքդ :

Պարզ է խնդիրը , ձին իմինս է .

չե՞ս գիտեր որ մենք հիմակ այն արդարասէր դատաւորին քաղաքն կը դտնուինք , եւ եթէ անոր դիմելու ըլլաս նա ինձ ինպաստ վճիռ պիտի տայ :

Ի՞նչպէս կրնայ այդպէս վճռել քանի որ ձին ինձ կը պատկանի :

Այդքան անխելք է՞ք . չէ՞ք խորհրդիր որ երբ դատաւորը տեսնէ ձեզ զօրաւոր , շխտակ սրունքներով ու զիս տկար , ծուք ու մուռ ոտքերով , իսկոյն պիտի վճռէ թէ ձին ինձ պէտք է պատկանի , որու այնքան կարօտ եմ ես :

Եթէ այս ըլլայ անոր տուած վճիռ , նա բնաւ արդար դատաւոր մը չպիտի ըլլայ , ըսաւ շէյխը :

Հօ՛ , ըսաւ կաղը ծիծաղելով , թէ եւ նա արդար է , սակայն ոչ անխալ :

Շէյխը ապշած մնաց . սակայն խոր-

հեցաւ որ այս լաւ պատեհութիւն մէ անձամբ ստուգել դատաւորին նոչակեալ արդարասիրութիւնը , ուստի ըստ կազին . լաւ , եկո՛ւր դատաւորին երթանք :

\* \* \*

Հասան դատարան . դատաւորը նըստած էր եւ հրապարակաւ դատաստան կը տեսնէր . Երկու դատ կար իրենցմէ առաջ :

Առաջինը ուսանողի մը եւ երկրագործի մը դատն էր . խնդիրը կնոջ մը վրայ էր , իւրաքանչիւրը կը պնդէր թէ կինը իրն է . Կինը յամառ լուսութիւն մը կը պահէր , եւ չէր ըսեր թէ երկուքին ո՛րն է իր այր : Դատաւորը երկու կողմը լսելէ ետեւ ըստ . կինը հոս թողէք , եւ վաղը եկէք : Ուսանողն ու երկրագործը խոնարհութիւն ըրին ու մեկնեցան :

Երկրորդ դատն սկսաւ . Մսավաճառ մը եւ ձէթալվաճառ մը ներկայացան : Առաջինը արիւնաթաթախ հանդերձներով եւ վերջինը վերէն ի վար ձէթով օծուած : Մսավաճառը իր

ինգիրն այսպէս ներկայացուց : —  
 Սա մարդուն գացի ձէթ զնելու համար , եւ երբ գրամը վճարելու համար քսակս գօտիխո մէջէն հանեցի , կոկորդս երկու ձեռքով բոնեց որ ձայն չանեմ եւ ջանաց քսակը ձեռքէս առնել ըսելով թէ նա իրեն կը պատկանի : Այսպէս զիրար քաշքշլով ձեր առջեւը եկանք : Ձէթավաճառն սկսաւ իր պատմութիւն : Այս մարդը ինձմէ ձէթ գնել եկաւ . երբ շիշը լեցաւ , ըսաւ թէ ոսկի մը պիտի տայ որ աւրեմ , մանրուք հանեցի որ ոսկին աւրեմ , մէյ մ'ալ բոլոր ստակը յափշտակեց ու փախաւ , ետեւէն վազեցի «Գոզը բոնեցէք» պօռալով , եւ վիզէն բոնելով ձեր առջեւ բերի : Ստակը իմս է , ասոր ըսածը բոլորովին սուտ է : Դատաւորը նորէն ու նորէն հարցաքննեց երկուքն ալ . բայց ոչ ոք սառ մը կը փոխէր իր առջի պատմածէն . ուստի ըսաւ . զըրամը հոս թողէք ու վազը եկէք :

Մսավաճառը քսակը դատաւորին յանձնեց եւ երկուքն ալ հեռացան

խոնարհութիւն ընելով :

\* \* \*

Կարզը եկաւ չէյլին ու մուրացիկին : «Տէր իմ զատաւոր» , ըսաւ չէյլը , «նս հեռու երկրէ կուգամ վաճառք գնելու . քաղաքին դուռը այս կաղը դիմացս ելաւ , որ նախ ողորմութիւն խնդրեց ինձմէ , եւ յետոյ ձիուս վրայ ետեւս հեծնել ուղեց , որ ոտնակոխ չըլլայ : Հաճութիւն տուի , բայց երբ չուկան հասանք , ձիէն իջնել չուղեց , պնդելով թէ նա իրեն կը պատկանի : Այս է ճիշդ եղելութիւնը , աէր իմ զատաւոր» :

Այժմ մուրացիկն սկսաւ պատմել : «Տէր , ըսաւ նա , երբ չուկան կուզայի գործս կատարելու , այս ձիուս վրայ հեծած , տեսայ որ այս մարդը ճամբուն եղերքը նստեր էր , յոդնած ու կէս մեռած վիճակի մէջ . Գութս շարժեցաւ , եափս , ձիուս վրայ առի եւ մինչեւ չուկան տարի : Սակայն որքան զարմացայ , երբ հոն համնելնուս , նա բացարձակաբար մերժեց ձիէս վար իջնել , ձին իմս է կ'ըսէր

ու չեր վար իջներ : Ուստի ինձ ուրիշ  
ճար չմնաց : այլ զիմել ձեր արդա-  
րութեան» :

Դատաւորը նորէն ու նորէն կրկնել  
տուաւ իւրաքանչիւրի պատմութիւն,  
ու պահ մը խորհելէ ետեւ ըստ : Զի՞ն  
հոս թողուցէք եւ վաղը եկէք :

Շէյխն ու մուրացիկը դատարանէն  
հեռացան եւ մէյմէկ պանդոկ գացին :

\* \* \*

Հետեւեալ առաւօտ բազմութիւնը  
հաւաքուած էր լսելու դատաւորին  
վճիռ : Ուսանողը եւ երկրագործը  
ներս կանչուեցան :

Առ կինդ եւ զնա՝, ըստ դատա-  
ւորը ուսանողին, եւ լաւ հակէ վրան.  
Եւ դառնալով գանիճներուն հրամայեց  
որ երկրագործին 50 գաւազանի հար-  
ուած տան : Հրամանն իսկոյն ի գործ  
գրուեցաւ :

Երկուքն ալ մեկնեցան, մին ու-  
րախութեամբ կինը հետոն առած, իսկ  
միւսը լալով ու ողբալով :

Մսավաճառն ու ձէթավաճառն այժմ  
ներկայացան : Ահա զրամդ, ըստ

դատաւորը մսավաճառին, առ եւ  
գնա՛, եւ դահիճներուն հրամայեց 50  
դաւազանի հարուած տալ ձէթավա-  
ճառին : Մսավաճառը յաղթանակը  
տարած մեկնեցաւ . նոյնպէս եւ ձէ-  
թավաճառն ականները կրծտելով :

Կարզը եկաւ շէյխին եւ մուրացի-  
կին :

Կրնա՞ս ճանշնալ ձիգ, հարցուց  
դատաւորը շէյխին, եւ 20 ուրիշ ձի-  
երէ զանազանել զայն :

Այսո՛, պատասխանեց շէյխը :

Եւ գո՞ւն, հարցուց դատաւորը  
մուրացիկին :

Անշուշտ, տէր իմ, պատասխանեց  
կաղը :

Ետեւէս եկուր, ըստ դատաւորը  
շէյխին :

Մեծ ախոռ մը մտան եւ շէյխը ցու-  
ցուց իր ձին որ 20 ուրիշ ձիերու քով  
կեցած էր :

Լաւ, ըստ դատաւորը, դատա-  
րան գնա եւ հակառակորդդ հոս իրկէ :

Շէյխը իրեն արուած հրամանը կա-  
տարեց : Մուրացիկը, որքան որ իր

կազ ոտքերով հնար էր , արտորնօք  
ախոռը վազեց , եւ առանդ սիսալի  
ճիշդ ճիռն վրայ դրաւ իր ձեռք :

Շատ բարի , ըսաւ դատաւորը , դա-  
տարան գնա եւ սպասէ :

Դատաւորը նորէն բազմեցաւ գահը  
եւ շէյխն ու մուրացիկը առջեւը բե-  
րել տուաւ :

Զին քուկդ է , ըսաւ դատաւորը  
շէյխին , ախոռը գնա' եւ ա'ռ . եւ  
գահիծին դառնալով ըսաւ . ուս կաղին  
50 դաւազանի հարուած տո՛ւր : Վը-  
ճիռը գործադրուեցաւ եւ շէյխը ա-  
խոռը գնաց ձին առնելու .

\* \* \*

Դատաւորը , յետ պաշտօնավարու-  
թեան , երբ տուն դարձաւ , շէյխը  
արդէն հոն իրեն կը սպասէր : Տուած  
վճիռէս գո՞ն չեղար , հարցուց դատա-  
ւորը շէյխին , երբ տեսաւ զանիկայ :

Ոչ , ընդհակառակն , պատասխանեց  
շէյխը . սակայն կ'ուզէի զիտնալ թէ  
ի՞նչ միջոցներով դու արդարութիւն  
ի գործ զրիր , քանզի տարակոյս չու-  
նիմ թէ միւս երկու վէճերն ալ իմի-

նիս նման արդար վճիռ ստացան : Ես  
վաճառական չեմ , ես Ալճէրիի շէյխն  
եմ , եւ ուզեցի անձամբ ստուգել քու  
հոշակեալ իմաստութիւնդ :

Դատաւորը այլայլով խոնարհու-  
թիւն ըրաւ եւ իր տէրոջ աջն համ-  
րուրեց երկիւղածութեամբ եւ ակնա-  
ծանօք :

Կը փափաքիմ , ըսաւ շէյխը , զիտ-  
նալ թէ ի՞նչ պատճառներով այս ե-  
րեք վճիռները տուիր :

Տէր իմ , ըսաւ դատաւորը , աղկէ  
ալ պարզ բան չկայ երկրիս վրայ :  
Մնչուշտ ձեր վսեմութիւն զիտեց որ  
երեք խնդիրներու մէջ ալ վէճի ա-  
սարկան քովս պահեցի :

Այո՛ :

Լաւ . առտուն կանուխ կինը կան-  
չեցի , եւ յանկարծ հրամայեցի կա-  
զամարս նոր մելան լեցունել : Նոյն  
գործողութիւնը հարիւր անդամ արդէն  
կատարողի մը նման նա առաւ կա-  
զամարը , մէջի բամպակը հանեց ,  
լուաց , դարձեալ զրաւ կաղամարին  
մէջ եւ յետոյ նոր մելանը վրան լե-

ցուց , Բոլորը ճարտարութեամբ ու  
յետին մաքրութեամբ կատարեց , ա-  
նանկ որ յայտնի էր թէ ուսանողի մը  
կինը պէտք էր ըլլար նա եւ ոչ թէ  
երկրագործի մը :

Առ աղէկ . բայց ստոկի՞ն խնդիրը  
ինչպէս լուծեցիք :

Չեր վսեմութիւն հարկաւ դիտեց որ  
ձէթավաճառին հանդերձը եւ ձեռքերը  
ձէթով օծուած էին :

Այս , այնպէս էր :

Լաւ . դրամը առնելէս ետեւ ջրով  
լեցուն ամանի մը մէջ ձգեցի . առ-  
տուն ելայ եւ լաւ մը քննելէ ետեւ  
ջուրին վրայ ձէթի նշոյլ մ'անգամ չի  
տեսայ . ուստի ինքնիրենս ըսի . եթէ  
այս դրամ ձէթավաճառին ըլլար , ա-  
նոր ձեռաց հպումէն ձէթուա պիտի  
ըլլար , եւ քանի որ այսպէս չէ , պէտք  
է դրամը մասվաճառին ըլլայ :

Շէյխը հաճութեամբ գլուխը շարժեց .  
Շատ աղէկ . բայց իմ ձի՞ս :

Ա՛ , այդ ասորբեր խնդիր մ'էր , եւ  
մինչեւ այս առառու ես շուարած էի .  
Կարծեմ կազմ չկրցաւ ճանչնալ

կենդանին , հարցուց շէյխը :

Ընդհակառակը , պատասխանեց դա-  
տաւորը , անմիջապէս ձեռքը ձիուն  
վրայ դրաւ :

Է՛հ . ի՞նչպէս հասկցար թէ ձին ա-  
նորը չէ :

Երբ ձեզ . երկուքդ ախոռը բերի ,  
նպատակս այն չէր որ դուռ+ ճանչնաք  
ձին , այլ հասկնալ թէ արդեօք նի՞  
կը ճանչնաք զձեզ . Երբ գու կենդա-  
նիին մօտեցար , ձին ձեզի դարձաւ ,  
ականջներն եաին ծռեց եւ բերկրու-  
թեամբ ճայն հանեց . բայց երբ կազն  
իրեն մօտեցաւ , կենդանին սկսաւ կից  
նետել :

Շէյխը պահ մը խորհելէ ետեւ ըսաւ .

Աստուած քեզի մեծ իմաստութիւն  
է պարգևեած . դու պէտք էր իմ պաշ-  
տօնս վարէիր եւ ես քուկդ , սակայն  
կը վախնամ որ ես , իրը դատաւոր ,  
քու տեզդ չեմ կրնար բանել :

Այս ըսաւ եւ դատաւորէն բաժ-  
նուելով գոհունակ սրտով իր պաշ-  
տօնին վերադարձաւ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ Եֆ. Կ. ՄԻՔԻՔԵԼԱՄ

Կ. Պոլսոյ Բող. հասարակութեան  
երեւելիներէն Յարութիւն էֆ. Կ.  
Միքիքէլամ, որ զբեթէ տարիէ մը  
ի վեր կը տառապէր անսղոք հիւան-  
դութեամբ մը, վերջերս ի Տէր ննջեց:

Հանգուցեալը ծնած էր 1846ին :  
1858ին կը մտնէ Պէպէքի Աստուա-  
ծաբանական վարժարանը, ուր կ տա-  
րուան ուսանողական կեանքին մէջ  
թողու ուսումնասէր, յաջողակ եւ  
պարկեշտ աշակերտի մը անունը :  
1863ին կը յաջողի ձեռք ձգել Բերայի  
Մէմորիել Զըրչի երէցին մէկ վկայա-  
կանը, եւ նիւթական աննպաստ պա-  
րագաներու տակ կ'երթայ Մալթա :  
Հոն կը մտնէ Անգղ. Բարձր. վարժա-  
րանը իրր գործաւոր-ուսանող : Քանի  
մը շաբաթ վերջ վարժարանին տնօ-  
րէնութիւնը գոհութեամբ կը զիտէ  
անոր ցոյց տուած վափաքը եւ ըն-  
դունակութիւնը : Ուստի կ'ընդունի  
զայն իրր ձրի աշակերտ : Պատանի


ուսանողը կ'անդամուկցի կանոնաւոր  
կարգի մը, որուն մէջ օր քան զօր  
ի հանդէս կը բերէ նորանոր եւ թա-  
գուն կարողութիւններ եւ ձիրքեր :  
Ուսման եւ գիտութեան հետ յառաջ  
կը տանի նաեւ Անգղ. եւ Գաղ. լե-  
զուններու ուսումը : Կ'արժանանայ  
բոլոր ուսուցիչներուն գնահատման  
եւ համակրութեան : Կ տարուան  
փայլուն ուսանողութենէ մը վերջ  
կ'ընդունի վարժարանին վկայականը :  
1868ին մայրաքաղաքս կը վերադառ-  
նայ : Նոյն տարուան մէջ կը մտնէ  
Օսմ. հեռագրատան Կ. Պոլիս-Հնդկաս-  
տանի ճիւղին մէջ : Հոն ալ ցոյց կու  
տայ մեծ կարողութիւն Անգղ. եւ Գաղ.  
լեզուններու թարգմանութեան գործին  
մէջ : Կարճ ժամանակէն կ'արժանա-  
նայ հեռագրատան Անգղ. տնօրէնին  
կատարեալ վսահութեան : Նոյն մի-  
ջոցին, իր պարապոյ ժամերուն մէջ,  
կը յաճախէ իր երիցագոյն քրոջ խա-  
նութը : Կ'օգնէ անոր հաշիւններուն,  
եւ կը ջանայ օգտակար ըլլալ : Այս  
առիթով կը սիրէ առեւտրական գործը,

եւ օր քանի զօր հետամուտ կ'ըլլայ  
ծանօթանալու վաճառականական սկզ-  
բունքներու։ Վերջապէս կ'որոշէ նետ-  
ուիլ վաճառականական ասպարէզ։  
Կ տարուան գործունեայ եւ օգտակար  
շրջանէ մը վերջ կը հրաժարի հեռա-  
գրական պաշտօնէութենէ։ 1873ին  
Պարսիկ մեծահարուստ վաճառականի  
մը հետ իբր թարգման կ'երթայ Եւ-  
րոպա։ Այդ առիթով կ'այցելէ Անգ-  
ղիա, Գերմանիա եւ Գաղղիա, ուր  
պատեհութիւն կ'ունենայ շփուխ եւ  
յարաբերութիւն ու բարեկամութիւն  
հաստատել առաջնակարգ գործարա-  
նատէրերու հետ։ Ահա այդ ուղեւո-  
րութիւնը նախադուռն կ'ըլլայ իր 30է  
աւելի ճանապարհորդութիւններուն,  
զորոնք կը կատարէ դէպ ի Եւրոպա,  
եւ որոնք ծնունդ կու տան Յ վաճա-  
ռատուններու։ Ասոնք ճանօթ են  
մայրաքաղաքիս եւ Գահիրէի մէջ  
«Բիկմալիոն» եւ «Օլտ Ինկլընտ» ա-  
նունով։ Այնչափ կը սիրէր իր գործը,  
եւ փարած էր անոր որ գրեթէ մին-  
չեւ իր մահը կը վարէր բոլոր ընթա-

ցիկ գործերը։ Համբերութիւն, ուղ-  
ղամտութիւն եւ աշխատասիրութիւն.  
ահա անոր յաջողութեան զլխաւոր  
գաղանիքը։ Իր նիւթական բարձրու-  
թեան մէջ չէր մոռնար մասնակցիլ  
բարեսիրական հաստատութիւններու  
եւ ուրիշ օգտակար նպատակիներու  
համար կատարուած նուիրատուու-  
թիւններու։ Գոհութեամբ կ'իմա-  
նանք թէ Միրիքէլամ էֆ. իր մահ-  
ուան անկողնին մէջ փափաք յայտ-  
նած է Բերայի եւ Լանկայի Աւետ.  
Ժողովրդոց համար ազագային կառու-  
ցանելի եկեղեցիներուն համար նուի-  
րել մէյսէկ համեստ գումար։ Նմանօ-  
րինակ գումարներ որոշած է նաև  
Պրուսայի եւ Պարախակի որբանոց-  
ներուն համար։ Խնդրած է նաև որ  
սոյն երկու որբանոցներու համար իր  
տարեկան նուէրները կանոնաւորա-  
պէս շարունակուին վճարուիլ։ Կը  
յուսանք թէ հանգուցելոյն բարեպաշտ  
զաւակները պիտի յարգեն եւ կատա-  
րեն իրենց սիրելի հօր այս վերջին  
կամքը։

Յուղարկաւորութեան պաշտօնը կատարուեցաւ Աւետ. Հայերու Ֆէրիդիւզի գերեզմանատան մատուռին մէջ՝ երկսեռ մեծ բազմութեան մը ներկայութեան : Պաշտօնին մասնակցեցան Պատուելիք Տ.ք. Ճ. Ք. Կրին, Ա. Կոստանդեան, Ա. Կ. Աստուրեան, Ա. Կ. Պետիկեան և Գ. Ն. Շիշմանեան և Փրոֆ. Յակոբոս Էֆ. Ճէճիկեան :

Հանգուցեալն ունէր Գ. Կարգի Մէծիտիյէ պատուանչան, որուն արժանացած էր 12 տարի առաջ : Կը թողու այրի մը եւ 4 զաւակներ, որոնց 2ը մանչ են, եւ 2ը աղջիկ :



## ՀԱՐՑԱՐԱՆ

Խնձորին օգուտը ի՞նչ է .  
Խնձորը միծ քանակութեամբ փօռ փօր պարունակելուն պատճառաւ, երիկամունքներուն, փայծաղին եւ

ստամոքսին վրայ խիստ օգտակար ազդեցութիւն ունենալէն զատ, հանգիստ քուն ալ կը պարգեւէ . ուստի այս օգտակար պառողէն շատ ուտելու է :

Վէրքի համար պարզ դարձման մը կա՞յ :

— Այո՛, կազամբին տերեւը, որ ի՞նչ վէրքի վրայ ալ դրուի, կը բժշկէ զանի եւ կ'արգիլէ սպիթ գոյացում :

Շնչարգելութիւն մեղմացնելու համար ի՞նչ ընեմ .

— Առ 16 տրամ լաւ մեղք եւ խառնէ 8 տրամ Հնդիկ իւղի հետ. կե՛ր ասկէ առաւօտ երեկոյ մէյմէկ անուշի դգալ եւ շատ օգուտ պիտի տեսնես :

Թրթուրներն ոչնչացնելու ազդու եւ աժան միջոց մը կրնա՞ք յանձնարել .

— Բոլատ էֆ. հետեւելոլը կը յանձնարարէ . Լեղի վարունգ 25 տրամ ծեծել, փոշի ընել, յետոյ 5 քաշ

ծթռած ձէթի հետ խառնել եւ վրան  
աւելցունել 1 քաշ խայծղան (գալլան).  
բոլորը լաւ մը մեծել եւ յետոյ որ-  
թերու (ասմա) կոճղերուն քսել . մօ-  
տեցող թրթուրն իսկոյն կը սատկի .  
Մասնք 100 որթի համար 22 դրուշ :

Այրածի աղբու գեղ մը զիտէ՞ք .

— Այս', այրած մասը ձէթով օծէ ,  
եւ վրան բարակ աղ ցանէ . քիչ ժա-  
մանակէն ոչ ցաւ եւ ոչ բորբոքում  
կը մնայ :

Արիւն ի՞նչպէս կրնամ դաղբեցու-  
նել .

— Ածուխը բարակ ծեծէ եւ արիւ-  
նած մասին վրայ ցանէ . իսկոյն կը  
դաղբի հոսում :

Շան խածուածքին ի՞նչ դարման  
կայ .

— Խածուած տեղը անմիջապէս տաք  
քացախով կամ քաղջ ջրով լուա, չոր-  
ցուր եւ վէրքին մէջ մի քանի կաթիլ  
աղի թթու, առեւ մէրքէանէ+ կաթեցուր :

Թամբի վէրքեր ի՞նչպէս կը բժըշ-  
կուին .

— Անասունին վէրքը թաց սպուն-  
գով սրբելէ յետոյ մէջը ծեծուած  
զմուռս , մէրքէ սաֆէ խառնէ :

Մեղուի խայթուածքն ի՞նչպէս կը  
դարմանուի .

— Նախ խայթոցն հանել , ապա  
խայթուած տեղէն սկսեալ ծեռքը զօ-  
րաւոր կերպով չփել , ի վերջոյ հա-  
սարակ աղն ջրով թրջէ եւ խայթ-  
ուածքին վրայ կապէ :

Սա լուերէն ի՞նչպէս կրնանք ազա-  
տիլ .

— Նախ մաքրութիւն կը յանձնա-  
րաբենք : Առ «Ապրիմ Մեռնիմ» կոչ-  
ուած ծաղիկը ու անկողինդ զիր . դու  
կապրիս , լուն կը մեռնի :

Սա մուկերէն ազատեցէք մեզ :

— Ժիրայր Շիրակացիին եթէ զի-  
մես , աս խրատը կուտայ քեզի . —  
Բարակ խիստ ճերմակ դաճ (մէռնէռ)

խառնէ քիչ մը ալիւրի հետ . լից խոր սկաւառակի մէջ եւ զիր մուկերուն գտնուած տեղը , քովն ալ ջրով լեցուն աման մը . մուկը կուտէ ալիւրը , կը խմէ ջուրը եւ կը սատկի :

Հաւկիթ պահելու պարզ կերպը  
ո՞րն է .

— Ընտրէ թարմ հաւկիթներ , օձէ ձէթով , ճարպով կամ քոլօտիօնով , չորցուր եւ մնառուկի մէջ շարէ :

Վսեմագոյն դաստիարակութիւնը  
ո՞րն է .

Հոգին առաւել քան զմարմին . ուստի բարոյական — հոգւոյ , սրտի — դաստիարակութիւն մտաւորէն վսեմագոյն է : Պարախնք մտաւոր դաստիարակութեան հեա սրտին , հոգւոյն մէջ ազնիւ , վեհ զգացումներ , փափաքներ , նպատակներ արթնցունել : Սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ , սա է ակն , զսպանակն , մարդկային ամէն գործողութեանց . կրթուելով . մշակուելով սիրտ , հոգի նկարագիր

ի բարին առաջնորդուի . Ապացոյցի չէ կարօտ . բաւ է զիտել զլուխը , միտքը լեցուն բայց սիրտ պարապ , դատարկ անձի մը կեանք :

Արդուզարդի կարծ կանոնը ո՞րն է .

Հանդերձներու ներդաշնակութիւն , ոտից ցզլուխ . գոյներու ներդաշնակութիւն . բաց գոյն շրջազգեստ , սեւ զլխարկ , վրան դոյնզգոյն փետուրներ , քօրտէլաններ , դեղձանիկ մ'ալ գագաթը , կարմիր հովանոց . — եղա՛ւ մի աս . ծաղու առարկայ չը լլար այսպիսի արդուզարդով օրիորդ մը : Ալ գու լուծէ խնդիրը .

Առարկայի մը բարձրութիւն ի՞նչ-պէս կրնանք չափել .

— Հնդիկները բարձր առարկայէն կը հեռանան ա'յնքան մինչեւ տեսնեն անոր գագաթ երբ ծռելով երկու սըրունքին մէջանդէն նային . հոն նշան մը կը գննեն եւ անկէ կը չափեն առարկային մինչեւ պատուանդանը . այս է առարկային բարձրութիւն :

Այրող սիսուէն ի՞նչպէս ազատելու  
է կենդանիները .

— Աշքերնին կապելով . ձիերուն  
համար սակայն այս միշտ չցածողիր .  
կազմածնին վրանին դնելով , իբր  
թէ առօրեայ աշխատանքի կը տար-  
ուին :

— Ոջլոտած ընտանի անասուններ ի՞նչ-  
պէս կրնան մաքրուիլ .

— Քարիւզով լաւ մը օծէ կենդա-  
նին . բայց զգուշացիր որ կրակի քով  
չերթան . գիտես ի՞նչ կ'ըլլայ . պատ-  
ճառը օրացոյցս չսեպուի . զի սա օ-  
գուտ ընել կ'ուզէ եւ ոչ վնաս :

Սանաբս մաքրել զժուար զործ է .  
դիւրին կերպ մը կա՞յ .

— Գոնէ ամիսը մէկ անգամ բաղնիք  
դացէք . նախ այս . Ապա սանտրիդ  
մեծութեամբ ֆանէլայի կտոր մը ան-  
ցուր սանտրին ակռաներէն եւ այն-  
պէս սանաբէ զլուխոդ . երբ աւարափ  
քաշէ ֆանէլան մեզմիւ եւ հանէ ո-  
րով ակռաներուն մէջ մնացած աղ-

տերը եւ — եթէ կան — անամնիկները  
դուրս կ'ելլեն :

— Սոխէ կախորդմիմ բայց ոչ հոտէն ,  
ի՞նչ ընեմ որ հոտը չեզոքացունիմ .

— Սոխը սոխ է եւ ուստի սոխի  
հոտ ունի . քանի որ սիրելի սոխէդ  
չես ուզեր հրաժարիլ , հաճէ զայն վա-  
յելելէ ետեւ ազատքեղի (Տայրանօս)  
վրայ քացախ լից եւ կեր . սոխին  
հոտը կը չեզոքանայ . փորձէ անգամ  
մը :

— Գիշերային քրաինքի ի՞նչ դարման  
կայ .

— Յուսում թոքերդ առողջ են :  
Առա շայէ առ , խաչէ , պաղեցուր ու  
խմէ :

— Այրածի դեղ մը յանձնարարել հա-  
ճեցէք .

— Կերեւի թէ նախորդ օրացոյց-  
ներս չէք ստացած . զնէ՛ մի հատ եւ  
հոն պիտի գանես մէկէ աւելի դեղ  
այրածի :

Փոխանցիկ հիւանդութեամբ տառապող բարեկամի մը ի՞նչպէս այցելեմ առանց անկէ վարակուելու :

—Վարակում երեք կերպով կ'ըլլայ, կամ շնչառութեամբ, կամ թոյնը ստամոքսին եւ կամ արեան շրջանին հազորգուելով : Վերջին երկուքը այցելութեանդ ատեն անկարելի է . ուստի առաջինն արգիլելու համար ածուխի փոշին քսակի մը մէջ լից եւ բերնիդ վրայ ու քիթիդ տակը բռնէ . թունաւոր օղը մէջէն անցնելով կը զտուի եւ չմնասեր :

Բնակարանիս գարշահոտ տեղերն ի՞նչպէս անվաս ընեմ .

— Ինչո՞ւ տանդ մէջ գարշահոտութիւն պիտի ըլլայ . առ չեղաւ, բարեկամ . Ուրեմն առ չմարած կիր եւ անօթներով դիր գարշահոտ տեղուանք :

— Շաքարը կրնա՞յ գեղ համարուիլ .

— Ոչ . բայց չատ գեղերու հետ կը խառնուի . շաքարը սնունդ է . Վէրքի վրայ փոշիացած շաքար կը ցանենք .

որով փտութիւն կանցնի եւ չարաւ կը դադրի , մանաւանդ երբ կաղնիի տերեւ եփենք շաքարով եւ վէրք անով լուանք :

Փոքր աղայոց որդ (*աօղլէճան*) ունենալուն ստոյգ նշանու ի՞նչ է .

—Միակ ստոյգ նշան որդը տեսնելն է . ասոր զգուշութիւն ըրէ ու տեսնելուդ պէս դիմէ բժիշկիդ :

Ստամոքսի անզօրութեան պարզ դարձան մը յանձնարարեցէք . քանզի դեղէ զգուած եմ .

— Ամէն առաւօտ նախաճաշէ առաջ 10-12 հատ սեւ պղպեղ կուլ տուր :

— Շաղկախոտէ գոյացած սպիները ջնջել հնա՞ր է .

— Ցաւալի է ըսել ո՛չ . սակայն կրնանք արգիլել որ ծաղկախարը չի թողու սպի . նախորդ օրացոյցներուս մէջ խօսած ենք այս մասին . հոս գեղ մ'ալ յիշենք . առ 1 մաս ճերմակ

մեղրամոմ, Յ մաս ձէթ եւ կրակին վրայ հայեցուը . բաւական տաք եղած ատեն փափուկ վրձինով մը ծաղկախտի իւրաքանչիւր վէրքի վրայ քսէ ասկէ . օդը կարտաքսուի , քերելը կը դագրի , որով սպի ալ չգոյանար . բժիշկդ կրնայ ուրիշ միջոցներ ալ յանձնարարել :

Կրնա՞յ կանխաւ գիտցուիլ հիւանդութեան մը գալուստը .

— Այո՛, կրնաս զգալ , երբ վրադ ընդհանուր թուլութիւն կը տիրէ , զէմքդ կը տաքնայ , ախորժակդ կը նուազի . ժամ է որ բժիշկդ կանչես : Ցիշէ որ նախազգուշութիւն լաւագոյն է քան դարմանում . աւելի աժան ալ է նա :

Քօրսէի համար ի՞նչ կարծիք ունիք .  
— Կարծի՞ք . ո՞չ , համոզումս է որ նա իր ծնունդ գժոխքէն է առած , զի կեանք կը վտանգէ : Լրագիրք զրիցին թէ եկեղեցւոյ մէջ Հայ կին մը մարեցաւ եւ մեծ խառնակութիւն

ծագեցաւ Աստուծոյ տաճարին մէջ . պատճա՞ռ . քօրսէն , «Առողջական քօրսէ» մը գիտենք եւ զիմողին կը նանք յանձնարարել :

Թունաւոր սունկ (Տանթար) ի՞նչպէս կը ճանչցուի .

— Շատ նշաններով , բայց ես կ'ըսեմ թէ ան բան որ կասկածելի է , պէտք է մերժել , ի՞նչ կըլլաս եթէ կինացդ մէջ սունկ կերած չըլլաս :

Ո՞ր կաթ աւելի սեր կարտադրէ .

— Առաւօտեան կթուած կաթը էն շատ սեր կարտադրէ . երեկոյեանը նուազ , իսկ կէս օրուանը էն քիչ :

Տղայոց շաքար տալ վնասակա՞ր է .

— Բնաւ . շաքար սնունդ է եւ ոչ թէ թոյն . չափագանցն է որ վնաս կուտայ , ամէն բանի չափագանցը վնասակար է . ներկուելով շաքարը կը թունաւորուի , ուստի մանաւանդ կանանչ , կապոյտ եւ կարմիր շաքարներէն զգուշացուր զաւակդ :

Մատանիս իր փայլը կը կորանցու-  
նէ . ինչո՞ւ .

— Կերեւի թէ չես գիտեր թէ ձեռքդ  
լուացած ատեն մատանին հանելու  
ես . քանզի լուացումը մատանիին  
քարին պղասր գոյն կուտայ :

Ճերմակեղէններս ի՞նչպէս անուշա-  
հու ընեմ .

— Փոխանակի տեսակ տեսակ հոտա-  
ւէտ հեղուկներ գործածելու , որոնք  
ճերմակեղէնները կարատաւորեն ալ ,  
պահարանիդ մէջ զիր չորցած ու փո-  
շիցեալ ծաղիկներ , ծեծած մեխակ ,  
կինամոն , եւ ուրիշ տեսակ սիրած  
ու հաւած հոտաւէտ փայտերէն ,  
այսպէս ճերմակեղեններէդ միշտ մեղմ ,  
անուշիկ հու մը կը բուրէ :

Գլխարկի ճերմակ փետուրները  
կրնա՞ն մաքրուիլ .

— Անշուշտ . ջայլամի ճերմակ փե-  
տուրները երբ աղտոտած են , զիր  
տաք ջրով ճերմակ օճառի փրփուրի  
մէջ եւ 5-10 բոպէ ճեռքովդ շփէ ,

յետոյ տաք ջուրէ անցուր եւ ապա  
շարժէ փետուրը օդին մէջ մինչեւ որ  
չորնայ . փետուրը բոլորովին կը նո-  
րոգուի :

Հարստանալու կարծ ճամբան ո՞րն է .

— Ահա հարց մը , որոյ պատասխան  
պէտք է որ հաւատացողները տան ի-  
րենց փորձառութենէն : Ասոնց մե-  
ծագոյն մաս այս հարց սապէս պիտի  
պատասխանէին . «Աժան գնէ , սուզ  
ծախէ , վարնոց բանը առաջնակարգ  
ապրանքի տեղ քչէ . յաճախորդ խա-  
րելով , ասոր անոր իրաւացի պա-  
հանջը կարէ . կրճատէ , առնելիքդ  
գանձէ , պարտքդ մի՛ վճարեր» . ահա  
է՞ն կարծ ճամբան հարստանալու : Այսու-  
է ակնկալուած պատասխանը . զիացիր  
սակայն որ այսպէս հարստացողը յան-  
կարծական կործանում պիտի ունե-  
նայ ուշ կամ կանուխ :

Ահա մի քանի ուղիղ միջոցներ .

1. Մուտքդ ելքէդ միշտ աւելի թող  
ըլլայ ուստի .

2. Աւելորդ յիմար ծախքերդ կըր-

ճատէ ու կրծատէ .

3. Մէկ մոլութեան համար ըրած տարեկան ծախքդ երկու զաւակ կը պահէ ամբողջ մի տարի .

4. Աննշան համարուած ծախքերէն վախցիր . աննշան համարուած ծակ մը նաւին ընկղմելուն պատճառ եղաւ .

5. Եթէ պէտք չեղածը գնես, գիտցիր որ պէտք եղածը պիտի պարտաւորիս ծախել . ուստի ,

6. Պէտք չեղած բանը մի գներ որքան աժան ալ ըլլայ .

7. Անողջութեանդ հոգ տար . սա է առաջին պայման կենաց յաջողութեան .

8. Գործիդ յարմար տեղ մը ընարէ, յարմար գործ մը որոշելէ ետեւ .

9. Պարտքէ զգուշացիր . ասոր նըման մարդս նուաստացունող բան չի կայ .

10. Յարատեւութիւն . աներկիւզ անվախ յառաջ վարէ գործդ երբ վըստահ ես թէ ուզիղ է նա .

11. Ամէն ինչ որ ձեռնարկես, բուլոր ուժովդ կատարէ .

12. Գործիդ տէր եղիր . խորհէ թէ միայնակ պիտի վարես բոլոր գործդ թէեւ ունենաս 100 գործաւոր :

13. Էն ընտիր միջացները գործածէ . Էն լաւ գործաւորները . աժան է ըսեւլով վարնոց մարդիկ մի գործածեր .

14. Միշտ կարողութեանդ չափը , զատողութիւնը որոշէ , եւ անկէ վեր բնաւ ձեռնարկ մի ըներ .

15. Օգտակար արհեստ մը ունեցիր պահեստի , որ երբ բախտին անիւ զառնայ եւ աղքատանաս անով ապրեցունես զքեզ եւ այլոց չըլլաս բեռ .

16. Երեւակայութեամբ մի մնանիր . դեռ հաւը չածած վառեակներդ մի համբեր .

17. Բաժանեալ զօրութիւն կը ակարացունէ միշտ . ուստի կարողութիւնդ, նիւթական ու բարոյական բնաւ մի բաժներ . Ամբողջ ուշադրութիւնդ միայն գործիդ առւր .

18. Կարգով , կանոնով գործէ . ամէն բան տեղին եւ ժամանակին .

19. Ընթերցասէր եղիր . լաւ լրագրեր ու գրքեր կարդալով աշխարհի

մէջ պատահած նոր դէպքերուն հետ  
ծանօթութիւն ըրէ : Ան որ լրագիր  
չկարդար շուտ պիտի տեսնէ թէ  
գործը ետ կերթայ .

20. Առանց ապահովութեան ուրիշ  
համար երբեք երաշխաւոր մի ըլլար .

21. Գործդ ազգարարէ . ամէն մէկը  
իր ապրուստին համար ժողովուրդէն  
է կախեալ , ուստի գործդ ծանօթա-  
ցուր ժողովրդեան բայց ճիշդ ինչպէս  
որ է .

22. Յաճախորդացդ հետ յոյժ քա-  
ղաքավար եղիր . բարեկրթութիւն եւ  
քաղաքավարութիւն դրամագլուխ են,  
յաճախորդք անոնցմով կը կապուին  
քեզ եւ գործիդ հետ .

23. Գիտասիրտ , բարեգործ , առա-  
տաձեռն եղիր . յիշէ որբերն ու այ-  
րիները , յիշէ որբանոցներն ու հի-  
ւանդանոցները , տուր , կանոնաւոր  
կերպով բարեգործէ , կտակ ըրէ ա-  
նոնց քանի որ դեռ կապրիս , Սողո-  
մոն կըսէ . «Ոմանք ստացուածք ցըր-  
ուելով զայն կը բազմապատկեն , մինչ  
այլք ստացուածք խնայելով չքաւո-

րութեան կը հասնին :

Առեւարական մարդկանց նկարա-  
գիրը ո՞րն է .

— Համառօտ կերպով հետեւեալը .

1. Իր բանին գործին ետեւէն կ'ըլ-  
լայ .

2. Արտորնօք եւ անհոգութեամբ  
ոչինչ կ'ընէ .

3. Ան բանը որ ինք կրնայ ընել ,  
ուրիշի չյանձներ .

4. Ամէն բան իր սեպհական տեղն  
ունի .

5. Ան բանը որ պէտք է կատար-  
ուի չյետաձգեր .

6. Իր նպատակն ու միտքը ուրիշ-  
ներէ գաղտնի կը պահէ .

7. Յաճախորդներուն հետ վճռա-  
կան եւ ճիշդ կը գործէ .

8. Ծախելու եւ զնելու մէջ կան-  
խիկ նախամիծար .

9. Նախապատիւ քիչ շահ ստոյգ ,  
քան մեծ անստոյգ .

10. Փոխանակ միտք պահելու կը  
գրէ ամէն գործառնութիւնք .

11. Կարեւոր նամակաց օրինակները  
կը պահէ .

12. Նամակներ , զրութիւնք կար-  
գաւ կը պահէ .

13. Սեղանին վրայ խառն եւ շփոթ  
թղթեր չեն գտնուիր .

14. Միշտ ժամանակին գործին զը-  
լուին է .

15. Կը յիշէ թէ երբ կասկածի ևն-  
թարկուի , կորսնցունէ վստահութիւն .


16. Միշտ կը քննէ հաշուեառմար-  
ները .

17. Կանոնաւոր վճարմունք թէ ի  
վաճառատուն եւ թէ դուրս .

18. Խնայող է իր ծախուց մէջ .

19. Ծոցը յուշատեար մը ունի ա-  
ռորեայ արձանագրութեանց համար .

20. Երաշխաւորելու զգոյշ , պատ-  
րաստ բարեգործելու . Յաջողութիւն  
միայն նախախնամութենէն կ'ակըն-  
կալէ :



## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ասաեղագուշակ մը լուի ԺԱ.ի բա-  
րեկամուհիներէն մէկուն համար գու-  
շակեց թէ 8 օրէն պիտի մեռնի . այն-  
պէս ալ եղաւ :

Լուի ԺԱ. խիստ բարեկանալով ձեր-  
բակալել տուաւ աստեղագուշակը եւ  
հրամայեց որ երբ նշան մը ընէ պա-  
տուհանէն վար նետեն զնա :

Դու որ այլոց բախար կը գուշա-  
կես , ըստ ձերբակալեալին , ըսէ  
տեսնեմ , գո՞ւ երբ պիտի մեռնիս :

Ձեր Վեհափառութենէն միայն 3  
օր առաջ , պատասխանեց աստեղա-  
գուշակը :

Աւելորդ է ըստ որ պատուհանէն  
վար նետելու նշանը չարուեցաւ :

Գիտուն մարդ մը նաւակ նստած  
կը ճամբորդէր :

կեանքդ կորսուած է :

Զայս ըստու , եւ ծովը նետուելով  
ցամաքը ելաւ :

Լոնտոնի թատրոններէն մէկուն մէջ  
քսակահատ մը կտրեց երիտասարդի  
մը աղամանգեայ կոճակը ։ Երիտա-  
սարդն իսկոյն բռնեց քսակահատը եւ  
կարեց ականջը :

Առ կոճակներդ ; կը պոռար քսա-  
կահատը :

Շատ լաւ , պատասխանեց երիտա-  
սարդը , ա'ռ զու ալ սա ականջդ :

Անկուտաի երիտասարդ մը կառք մը  
նստելով տուն կերթայ . զրան առջեւ  
համնելուն երբ վճարելու կարզը կու-  
գայ , կառապանին կըսէ թէ քսակը  
բացած ատեն երկու ոսկի ձգեց կառ-  
քին մէջ , եւ մութ ըլլալուն՝ զայն չը  
կրնար գտնել . ուստի պէտք է վեր,  
սենեակը երթայ եւ ճրագ մը բերէ  
ոսկիները գանելու համար : Զայս ը-  
սելով առնը կը մտնէ , եւ ականջ  
զնելով կը գանէ որ կպուապանը սրար-

թուաբանութիւն գիտե՞ս , հարցուց  
սա նաւավարին :

Այդ բառ զեռ նոր կը լսեմ , ըստ  
նաւավարը :

Կը ցաւիմ , պատասխանեց գիտնա-  
կանը , քանզի կեանքիդ մէկ քա-  
ռորդը կորսուած է :

Քիչ մը յառաջ գնալէ յետոյ գի-  
տունը նոր հարցում մը ըրաւ նաւա-  
վարին .

Բնագիտութիւն գիտե՞ս :

Ոչ , պատասխանեց նաւավարը :

Աստեղագիտութի՞ւն :

Բնաւ , ըստ նաւավարը :

Ո՛հ , հառաջեց գիտունը , կեանքիդ  
էսը կորսուած է :

Հազիւ թէ զայս ըստած էր . եւ ա-  
հա նաւակը ժայռերուն զարնուեցաւ  
ու սկսաւ ջուր լեցուիլ :

Նաւավարն հանեց հանգերձներն եւ  
գոչեց ահարեկեալ գիտնականին .

Բարեկամ , լողալ գիտէ՞ք :

Ոչ , ըստ գիտնականը , գողզոջուն  
ձայնով :

Աւա՛զ , գոչեց նաւավարը , բոլոր

շաւ կը մեկնի տանը քովէն : Ճար-  
պիկ երիտասարդը զուռը բանալով կը  
պօռայ կառապանին ետեւէն որ կե-  
նայ , նա սակայն երկու քառորդի  
տեղ երկու ոսկի ձեռք ձգած կարծե-  
լով՝ կաներեւութանայ :

Աղամ ո՞րքան ժամանակ մնաց զր-  
բախտին մէջ :

— Մինչեւ որ ամուսնացաւ :

— Ուրեմն դրախտէն չի պիտի ար-  
տաքսուէր եթէ չամուսնանար եւայի  
հետ :

— Ես ալ այնպէս կը կարծեմ :

## Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Պնակին մէջ զիր ձիւն կամ սառի  
կտորներ , հետը քիչ մը աղ խառնէ .  
ուրիշ պնակի մէջ լից ջուր եւ դիր  
առաջին պնակին վրայ . երբ տակի

պնակին ստոն հալիլ սկսի , վրայի  
պնակին մէջի ջուրը կը սառի :

Հաւկիթը բարի քացախի մէջ ձգէ  
քանի մ'օր , որով կեղեւը կը կակուղ-  
նայ : Ապա ոլորէ ձեռացդ մէջ հաւ-  
կիթը եւ սրուակին բերնէն ներս մղէ :  
Պազ ջուր լից մէջը յետոյ , եւ հաւ-  
կիթ իր նախկին ձեւ կստոնայ եւ այլ  
եւս չես կրնար հանել սրուակէն :

Երկու գլուխ , երկու բազուկ . վեց  
ոտք : Ի՞նչ կը կոչուի այս հրէշ :

Իր արծաթ փոխ կ'առնէ , օաարին  
ոսկին ո՞վ :

Վրան միս , տակը միս , բայց ինք  
չէ միս : Ի՞նչ է այս :

5 հոգիի պնակին մէջի 5 հաւկիթը  
կը բաժնեմ , իւրաքանչիւր 1 հաւկիթ  
խատնայ , սակայն եւ այնպէս պնա-  
կին մէջ 1 հաւկիթ կը մնայ : Լուծէ  
զայս :

Եթէ և անկիւն մէյմէկ կատու  
կանգնին . իւրաքանչիւրը քանի՞ աչք  
կը տեսնէ :

100 գրել և հատ նման թուանշան-  
ներով :

Ա. Բ ին որդին է , եւ սակայն Բ  
չէ Ա. ին հայրը : Պարզէ զայս :

Ոտքին վրայ կը կանգնեցունեմ ,  
բայց , տե՛ս , նա միշտ գլխուն վրայ  
կը քալէ : Ո՞վ :

Աջէն ի ձախ — կենդանի . ձախէն  
յաջ — մետաղ :

Ամէն տեղ կերթայ առանց ստուեր  
ձգելու , ոչ ետին , ոչ առջին . Ո՞վ :

Սեւ է երբ տուն կը մտնէ , կարմիր  
երբ սեղանը դրուի , ինչ :

Ո՞ր ծովերը ջուր չունին . ո՞ր լեռ-  
ները ծառ չունին :

## ՀԱՇԻՒԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՐԻԿԻՐԱՄԵՆԻ ՕՐԱՑՈՅՑ

Միշտ համելի է , շատ անգամ նաեւ  
օգտակար ալ է զիտնալ թէ այս ինչ  
թուականը շարթուան ո՞ր օրուան կը  
համապատասխանէ : Օրինակի համար ,  
Մարդ մը ծնած է 1842 Օգոստոս 4ին ,  
կուզէ զիտնալ թէ ինչ օր էր : Ոչ  
նոր եւ ոչ հին ձեռքերնիս պատրաստ  
Օրացոյց չունինք , ի՞նչպէս ընկելու է :  
Ասոր համար շատ միջոցներ կան  
թէեւ . բայց մենք կուզենք հոս հա-  
մառօտ միջոց մը գործածել եւ ցոյց  
տալ Օրացոյցիս ընթերցողաց , թե-  
րեւս ոմանց օգտակար թուի :

ԿԱՆՈՆ . ինպրեալ թուականին նա-  
խընթաց տարւոյ աջ կողմի երկու  
թուանշաններէն (միաւոր եւ տասնա-

ւոր) ձեւացած թիւը 4ով բաժնել  
(մնացորդը առ ոչինչ սեպել եթէ կայ),  
քանորդը գումարել նոյն բաժանելիին  
վրայ . նաեւ տարւոյն սկիզբէն մին-  
չեւ փնտռուած թուականն եղած  
օրերու թիւն եւ գումարն 7ով բաժ-  
նել (չմոռնամ որ եթէ տարին նա-  
հանջ է Փետրուարը 29 օր հաշ-  
ուել), քանորդը կարեւորութիւն չու-  
նի . եթէ ,

մնացորդը	0	ելնէ	Երկուշարթի	է
»	1	»	Երեքշարթի	է
»	2	»	Չորեքշարթի	է
»	3	»	Հինգշարթի	է
»	4	»	Ուրբաթ	է
»	5	»	Շաբաթ	է
»	6	»	Կիրակի	է

Առաջարկուած Օրինակին մէջ ուսով  
կ'ուզուէր թէ ի՞նչ օր է 1842 Օգոս-  
տոս 4ը :

Ահա անոր լուծումը ,

Նախընթաց տարւոյ աջակողմեան  
Երկու թուանշանները 41 կը կազմեն ,

եւ տարւոյն սկիզբէն մինչեւ Օգոս-  
տոս 4ը 216 օր է , ուստի

41	+ $\frac{41}{4}$	+ 216	41+10+216	267	=	=	=	=	..
					7	7	7		4 մեաց
					Պատ.	Երեքշարթի	է :		

ԽՆԴԻՐ Բ. Ուաթէրլոյի ճակատա-  
մարտը՝ ուր Նաբոլէսն Պոնաբարթ  
յաղթուեցաւ, տեղի ունեցեր է 1815  
Յունիս 6ին . ինդիր է զիտնալ թէ  
ի՞նչ օր էր :

Գործադրենք տարազը ,

14	+ $\frac{14}{4}$	+ 157	14+3+157	174	=	=	=	=	..
					7	7	7		6 մեաց
					Պատ.	Կիրակի	էր :		

Այս տեսակ առաջարկութիւններն  
այս օրինօք կը լուծուին եթէ թուա-  
կանին ձախ կողմի երկու թուանշան-  
ները 18 կը կազմեն այսինքն ամբողջ  
դար մը կամ հարիւր տարի , ահա թէ

ի՞նչու համար սոյն հաշուոյն անունը  
հարէ-բամենէ օբացաց զրինք : Իսկ եթէ  
ասկէ վերջը գալիք թուականի մը օրը  
որոշել կ'ուզուի զարձեալ կրնանք  
գործադրել միայն թէ 1900ը իբր  
1800+100 նկատելու է :

**ՕՐԻՆԱԿ Ա.** 1935 Սպրիլ 20ը ի՞նչ  
օր պիտի ըլլայ արդեօք .

Աջակողմեան երկու թուանշաննե-  
րէն կազմուած թիւն ոչ թէ 35՝ այլ  
135 կը նկատեմ , կտու ուրիշ կերպ  
ըսելով 1835էն 1800 կը հանեմ՝ կու-  
նենամ 135 :

$$134 + \frac{134}{4} + 110 = 134 + 33 + 110 = 277$$

7              7              7      4 մնաց :

**Պատ.** Ռւբաթ պիտի ըլլայ :

**ՕՐԻՆԱԿ Բ.** Հետաքրքիր եմ զիտ-  
նալ թէ արդեօք ի՞նչ օր պիտի ըլլայ  
1992 Սեպտեմբեր 2ը :

$$191 + \frac{191}{4} + 246 = 191 + 47 + 246 = 484$$

7              7              7      1 մնաց :

**Պատ.** Երեքշաբթի պիտի ըլլայ :

S. Պօղաճեան

Զատկին կարմիր հաւկիթ վաճառող  
կին մը իւր զրացի կնոջ կը ծախէ իր  
ունեցած բոլոր հաւկիթներուն կէսը ,  
զոյգ զոյգ եւ հատ մը . ուրիշ յաճա-  
խորդի մը կը ծախէ առաջուան վաճա-  
ռումէն մնացած հաւկիթներուն կէսը ,  
զոյգ զոյգ եւ հատ մ'ալ . երրորդ կնոջ  
մը կը ծախէ երկրորդ վաճառումէն  
մնացած հաւկիթներուն կէսը , զոյգ  
զոյգ եւ հատ մ'ալ եւ չորրորդի մ'ալ  
կը ծախէ երրորդ վաճառումէն մնա-  
ցած հաւկիթներուն կէսը , զոյգ մը եւ  
հատ մ'ալ , եւ իրեն քով հատ մը  
հաւկիթ կը մնայ : — Լուծէ :

Երկու հովիւ իրարու կը պատահին  
Խաչօ՛, կըսէ Պետրոս , ոչխարհներուց  
մէկը եթէ ինձի տաս , այն ատեն քու


ունեցած ոչխարհներուդ կրկինը կունենամ : Չէ՛, կըսէ Խաչօն, գուն տուրինձի հատ մը քուկիններէդ ու այն ատեն ես քու ունեցածիդ չափ ոչխար կունենամ : — Լուծէ :

Մարդ մը 7 որդի ունէր եւ 4900 լիրա : Պղտիկ որդիքը կը խնդրեն հօրմէն որ ժառանգութեան բաժնուելուն իրենք մեծ եղբայրներէն աւելի ստանան : Այս առաջարկ հօր զժուար եկաւ , քանզի նա հաւասարապէս կը սիրէր 7 տղայքը : Պղտիկները սակայն հօրենուն բնաւ հանգիստ չէին տար եւ միշտ նոյն աղաջանք կ'ընէին , եւ որովհետեւ մեծ եղբայրները հաճութիւն տուին որ այնպէս լրաց , հայրը սա կարգագրութիւնն ըրաւ . Երէց որդին կանխիկ 100 լիրա առնէ եւ մնացեալին 8րդ մասը .

Երկրորդը 200 լիրա եւ մնացածին 8րդը .

Երրորդը 300 եւ մնացածին 8րդը . Չորրորդը 400 եւ մնացածին 8րդը . Հինգերրորդը 500 եւ մնացին . 8րդը .

Վեցերրորդը 600 եւ մնացածին 8րդը . Եօթներրորդը 700 եւ մնացածին 8րդը . Տղայք գոն եղան . կտակը այսպէս գրուեցաւ . երբ հայրը մեռաւ , կտակը գործադրուեցաւ : Ի՞նչ բաժին առաւ իւրաքանչիւրը : Լուծէ :



## ՖԵԿՈՐՆԵՐ

Նշանաւոր վիրաբոյժ մը կըսէ թէ՝ ամաննոց ակռայի-վրձիններէն զգուշանալու է , որովհետեւ ատոնց թելերը կամ մազերը լաւ հաստատուած չըլլալով գործածութեան ատեն կը բրդին եւ բերնին խորը կը մնան . ասկէ առաջ կուգան կոկորդի եւ ստամքսի անծանօթ հիւանդութիւններ :

Գերմանիոյ կայսեր ուղղուած նամակներուն եւ աղերսագիրներուն թիւը օրական 600ի կը հասնի :

Մեծն-Բիրիտանիոյ մէջ 17,000ի մօտ շոգեկառքի վայրաշարժներ կգտնուին:

Նարօլիի պանքան 1539ին հաստատուած է, եւ ներկայիս մէջ ամբողջ աշխարհիս վրայ գոյութիւն ունեցող զրամատուններուն ամէնէն չինն է:

Լոնտոնի նշանաւոր եկեղեցական-ներն երբեմն պարզ աշխարհականի լաթեր հազնելով, աղքատ ու բազմամարդ թաղերուն մէջ ժուռ կուգան, այսպէսով առիթ կունենան թշուառներուն կեանքը մօտէն ուսումնասիրել եւ անոնց նիւթական ու բարոյական պէտքերուն զարման խորհիլ:

Ամբողջ աշխարհիս վրայ գտնուած անգլիախօս ժողովուրդներուն մէջ ամէնէն շատ տարածուած մականունն է Ամիկը (դարբին) :

Բարիզի Ազգային Մասենադարանն Զ միլիոն տպագրուած հատորներ, իսկ Լոնտոնի Բիրիտանական թանգարանը

$\frac{1}{2}$  միլիոն տպագրուած հատորներ կը պարունակեն:

Եւրոպական Ռուսիոյ ամբողջ մակերեսոյթին մէկ երրորդն անտառներով ծածկուած է:

Զուիցերիոյ մէջ զբօսաշրջիկներու յատուկ 1693 օթէներ կը գտնուին. ասոնց մէջ կան 88,000 անկողիններ և 24,000 ալ պաշտօնեայներ, սպասարկուներ, եւլու:

Աշխարհիս ամէնէն շատ գարեջուր շինող երկիրները — իրենց արտազրածին քանակութեանը համեմատ հետեւեալիներն են, Գերմանիա, Մեծն Բիրիտանիա, Մ. Նահանգները, Աւստրիա-Հունգարիա, Պելմիա, Ֆրանսաւ եւ Ռուսիա:

Յունաստանի թագուհին « ծովումարդ » ու յատկութիւններ ունի. առաջաստաւոր-զբօսանաւ մը դիւրութեամբ կրնայ վարել. ատկէ զատ նա-

Հապետի վկայագիր ունի եւ սուսական նաւատորմին մէջ պատռակալ ծովակալ է :

Հանգուցեալ Մր. Կլատսդոնի անձնական գրատունն 30.000է աւելի հատորներ կը պարունակէ :

Ամբողջ Մարտքի աէրութեան մէջ ո եւ է լրագիր չի հրատարակուիր :

Մօնաքօի իշխանն Զ միլիոն անգլ. սոկիի հարստութիւն ունի . եւ հետզհետէ աւելի ունենալու ալ յօյս կայ Ամէն տարի Մօնթէ-Քարլօի խաղարաններէն 50,000 անգլ. սոկիի հասոյթ ձեռք կը ձգէ :

Անգլիոյ Մանչէսթրը քաղաքին կերտոնական բանտին մէկ մասը կիներու յատկացուած է . այդ տեղի «Հիւր»երուն մեծ մասը կը բաղկանան գողցայն, արբեցող . զող եւ քսակահանատ կիներէ ու աղջիկներէ : Ասոնք իրենց բանտարկութեան միջոցին պարապ չեն

նստիր, ամրող բանտին մաքրութիւնն իրենց յանձնուած է, ատէ զատ բանտին ճերմակեղէններու լուացարանին մէջ կաշխատին :

Լորտ Սալզպրի իրր նախարարագետ ոչինչ կսահնայ, բայց իրր արտաքին գործոց նախարար 5.000 անգլ. սոկի ապրեթոշակ ունի :

Բժիշկ-առողջաբան մը կըսէ թէ՝ եփած խնձորները կերակուրին մարտողութեան մեծ դիւրութիւն կը պատճառեն :

Ոլորուած կամ ծռած գամերը տեղ մը պահեցէ՛ք՝ չիշերը մաքրելու համար : Այս գամերը նախընտրելի են քան կապարեայ զնդակները, վասնզի սուր ծալլերը կը քերեն ապակիին կպած բիծերն ու փոշիները :

Հազարին (Տարուալ) միջուկը միայն ուտելի է : Աբատքին մութ կանաչ տերեւները կը կազմեն միայն աւելորդ

ուտելիք մը , որ կը ծանրաբեռնէ  
ստամոքսը :

Սոխ կեղեւելէ կամ ջարգելէ ետքը  
ձեռքի վրայ մնացած հոտն անցընելու  
միջոցն է մատները շփել կաոր մը  
լախուրով (+Երեքչշ) :

Երբոր մէկը թանաք թափէ գորզի  
մը վրայ , պէտք է իսկոյն բարակ աղ  
ցանել բծաւորած տեղին վրայ . Սեւ  
նալէ անմիջապէս ետքը՝ պէտք է իսո-  
զանակով մը սրբել եւ ուրիշ աղ ցա-  
նել :

Թուխ կաշիէ ոտնամանները ներ-  
կելէ յառաջ , գեանախնձոր մը առէք,  
կիսեցէք ու կաշին շփեցէք անոր մէկ  
կէսովք , Ներկումը շատ աւելի դիւ-  
րաւ պիտի յաջողի , եւ ոտնամաններն  
աւելի սիրուն փայլ մը պիտի ստա-  
նան :

Ոչինչ աւելի կը վխառէ դաշնակի մը  
քան խոնաւութիւնը , պէտք է գոց

պահել դաշնակը՝ երբ օդն անձրեւոտ  
է , եւ եթէ պատուհանի մօտ զետեղ-  
ուած է , պէտք է ուրիշ տեղ մը փո-  
խազրիլ ձմեռուան միջոցին :

Պէտք է միշտ զով եւ չոր տեղ մը  
պահել ալիւրը :

Բրինձը շատ աւելի ընտիր համ մը  
կ'ունենայ՝ եթէ , եփելէ յառաջ , փո-  
խանակ պազ ջրով լուալու՝ տաք ջրով  
լուացուի :

Խորտիկը որչափ աւելի մանր ջար-  
գուած ըլլայ , նոյնչափ աւելի տաք  
պէտք է որ ըլլայ , փուռն ի սկզբան,  
որպէս զի լաւ ազդէ մոխն եւ որչափ  
կարելի է , աւելի պահէ անոր համե-  
զաճաշակ հիւթը :

Երբոր մէկը ձկան փուշ կլլած է ,  
զայն վար իջեցնելու համար՝ բաւա-  
կան է հաւկիթի ձերմկուց մը լաւ  
կերպով ծեծել ու կլլել :

Քառակշեռն ու սուրի լուծաջուր մը  
կատարելապէս կը մաքրէ լամբարի  
մուխով սեւցած ձեղունները :

Փսխեցուցիչ առնելէ անմիջապէս  
ետքը, հիւանդին պէտք է տալ որ  
ուտէ վեց հաւկիթ՝ «սիւպլիմէ քօռօ-  
զիֆ»ը չեղոքացնելու համար :

Երբոր մարմնոյն մէկ տեղն այրի ,  
իսկոյն պէտք է այրած մասին վրայ  
գնել հաւկիթի ձերմկուց մը՝ օդէն  
պահպանելու համար . Այս միջոցով  
իսկոյն կը հանդարափի ցաւը :

Խիւս (լուս) պարաստուած ժա-  
մանակ , եթէ մանանեխի (հարդար)՝  
ալիւր խառնուի հաւկիթի ձերմկուցի  
մը հետ՝ փոխանակ ջուր գործածելու,  
մարմնոյն վրայ ջրուոյց յառաջ չի  
դար բնաւ :




ՀԱՆԳՈՒՑԵՍԼ

ՊԱՏ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՃԵՃԻԶԵԱՆ

Պատ Աղեքսանդր անուշ յիշա-  
տակ մը թողած է իր ետեւ իր բնիկ  
քաղաքին , Ատաբազարի , մէջ , ուր  
ապրեցաւ եւ մեռաւ իրեն համար ազ-  
նուագոյն համբաւ մը շինելէ վերջ .  
Անոր յուղարկաւորութեան հանդէսը ,  
ուր Ազգ եկեղեցին երեւելիները եւ  
իրենց քարոզիչը կը միանային Բողո-  
քական հոտին ողբալու քաղաքին  
կրած կորուսախն վրայ , ազգու հա-  
կապատկեր մըն էր այն հալածանք-  
ներուն որոնց համբերած էր հան-  
գուցեալը եւ իր հօրը տունը : Շատ  
յուզիչ էր սգացեալ աւետարանական-  
ներուն վիշաը : Անոնցմէ մէկը թարգ-  
ման կրլար ընդհանուր զգացումին  
երբ կ'ըսէր , «Մեր հոգիները մահու-  
